





# Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ...


Շարունակում Ա. Էջն

թորիկներուն: Վեհափառ հայրապետին Ս. Ծննդեան պատգամին գլխավոր նիւթը միասնականութիւնն էր (խօսքին ամբողջութիւնը՝ 4րդ էջով):

Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան Հայրեր Ս. Ծննդեան տօնին առիթով պատարագեցին եւ քարոզեցին Լիբանանի թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ: Վեհափառ հայրապետին բարձր տնօրինումով, Միաբան Հայրեր Ս. Ծննդեան տօնին առիթով պատարագելու գացին նաեւ Պարսկաստան, Կ. Պոլիս եւ Հայէս:

Ս. Ծննդեան պատարագին ետք, վեհարանի դահլիճին մէջ, վեհափառ հայրապետը ընդունեց շնորհաւորութիւնները պետական, դիւանագիտական անձնավորութիւններու, ինչպէս նաեւ համայնքային ներկայացուցիչներու, հոգեւոր հովիւներու, թաղականացուցիչներու, հոգաբարձական կազմերու, միութեանական ու պանապան կազմակերպութեան ներկայացուցիչներու եւ հաւատացեալներու:

Ս. Ծննդեան տօնին առիթով վեհափառ հայրապետը հեռաձայնով շնորհաւորեցին հանրապետութեան նախագահը, խորհրդարանի նախագահը եւ վարչապետը:



ՄԱՀԱԵՄԻ Գալիսեան վեր. Սկրոյի Գարակէօզեան Ծնունդի իր պատգամը կու տայ Նոր Մարտի Հայ Աւետ. եկեղեցւոյ մէջ

ցումները կատարեցին՝ իրենց առաջին քայլերը առնելով հայ եկեղեցւոյ արարողական կեանքին ներս: Պատարագին ետք, վանական ասանդութեան համաձայն, մոմեր ի ձեռքին թափօր կապմամբ, հոգեւորականաց դարձելու ղարեվանքի ուսանողութիւնը «Խորհուրդ Մեծ» շարակաւնի երգեցողութեանը ուղղութեամբ մայրավանքի սեղանատունը: Ընթերցուցեալ վերջին Աւետարանը եւ կատարուցեալ սեղաններու օրհնութիւնը, որմէ ետք վեհափառ հայրապետին սեղանակից դարձան միաբանութիւնը եւ դարձանքի ուսանողութիւնը:

Միւս կողմէ, մեր եկեղեցւոյ դարաւոր ասանդութեան համաձայն, խորհուրդը պանապան եկեղեցիներու դարձեալ շրջեցան հայկական թաղերու մէջ եւ «Սորհուրդ Մեծ» երգելով՝ անտեցին Քրիստոսի ծնունդը:

## السفير الاستقبال الديار النصار السفير

7 Յունուարի թիւով լիբանանեան օրաթերթերը անդրադարձած են հայկական Ս. Ծնունդին առիթով Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ մատուցուած հայրապետական Ս. պատարագին եւ Արամ Ա. կաթողիկոսին քարոզին: Թերթերը նշած են, թէ Նորին Սուրբ Օծութիւնը գլխավորաբար հարցը լիբանանեան մակարդակի վրայ. ըստ թերթերուն, ան նշած է, թէ լայն բացութիւն կը ստեղծուի ժողովուրդին եւ պետութեան միջեւ, ինչ որ առիթ կու տայ, որ քաղաքացիներուն վստահութիւնը խախտի իշխանութեան նկատմամբ:

Տեղական մամուլը լուսարձակի տակ առած է Լահուտ - Հարիրի անհամաձայնութեան հարցը, իսրայէլեան շարունակուող բռնարարները եւ իրաքեան հարցին առնչուող վերջին իրադարձութիւնները: «Նահար» գրած է, թէ «Էմ. Թի. Վի.» 7 Յունուարին շարժումի կ'անցնի: Ըստ թերթին, հեռուէ հեռու նախագահին եւ վարչապետին «արտերու մեղադրանք»ը նոր հանդիպման մը առիթ կու տայ:

«Տիւրք» նշած է, թէ Սուրիոյ նախագահ Մուշարրաֆը Աստի Գալիսեանի հարցին առնչուող վերջին իրադարձութիւնները հետզհետէ կը մեղմանան եւ Պատարագը կը ծխուի նախագահ Լահուտի տեղեակ ըլլալը սիւնուրի դարձեալ իրադարձութեան լուրին: «Տիւրք» նշած է, թէ պիտի քուէարկէ ընդդէմ պետական պիտոններին, իսկ վարչապետ Հարիրի առողջական հարցերուն:

Ըստ «Սաֆիր»ի, Լահուտի եւ Հարիրի միջեւ եղած հարցը ըստ երեւոյթին վերջ գտաւ՝ քանի մը կէտով Լահուտի յաղթանակով. թերթը գրած է, թէ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի եւ ժողովաբար համաձայնութեան պիտոնները ի շահ ուսուցիչներուն եւ աշխատատեղերուն: «Անուար»ի համաձայն, բջիջային թղթածրարը կ'եփի տեղեկատուութեան հարցի կրակին վրայ. թերթը լուսարձակի տակ առած է այն երե-

ւոյթը, թէ Լահուտի եւ Հարիրի անհամաձայնութեան կեանքը կարճ է եւ երկրորդ արտերու լուսացումի հանդիպում մը պիտի կայանայ: «Լիւնա» արժարժած է այն հարցը, թէ «Նիւ. Թի. Վի.» ի խնդիրին մէջ կայ մուր կէտ մը: Նախագահ Լահուտ կը ծխուի այն պարագան, թէ ինք նախապէս տեղեակ էր, իսկ նախարարները կ'ըսեն, թէ իրենք նախապէս խորհրդակցած են անոր հետ: Ըստ թերթին, այս առնչութեամբ կապեր կը հաստատուին օրէնքի խախտում չարձանագրելու համար:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են այն լուրը, թէ Իսրայէլ կը սպառնայ Լիբանանը հարուածել: Ըստ թերթերուն, Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շաւու Մոֆապ յայտարարած է, թէ Լիբանանի ահաբեկչական ենթակառուցները պիտի հարուածէ, եթէ Հրկու պալլա օգտուի Իրաքի վրայ ամերիկեան յարձակումներէն եւ յարձակում գործէ իր հողերէն ներս:

Պաղեստինեան հարցին մասին «Մուսթաֆա» գրած է, թէ անձնասպանական գոյգ գործողութիւններուն պատասխանը տագնապ կը յարաբերուի թէ Միւրի եւ Լոնտոնի միջեւ. իսրայէլացիներ մեծաքանակ պատիժի կ'ենթարկեն պաղեստինցիները:

Ըստ «Նահար»ի, իսրայէլեան բռնարարները պատճառ դարձան, որ Լոնտոնի համագումարը չկայանայ: «Տիւրք» նշած է, թէ Ֆաթի Աբասի Փաղանգները կը պոռչացնեն, իսկ Շարունի խորհրդականը 8 Յունուարին Եգիպտոս պիտի մեկնի. դիւանագիտական վերականգնման իրադարձութիւնները կ'անհետան: «Մուսթաֆա» գրած է, թէ Լիբանանի խորհրդակցած է Լոնտոնի համագումարը, որով լուսարձակուած է Լոնտոնի յաւանգը: «Սաֆիր» գրած է, «Սատամ ՄԱԿի քննիչները կը դատաւարտէ լրտեսութեամբ, մինչ Պուշ կը պոռչացնէ՝ քննութիւնը կատարելէ. պատերազմի ամերիկեան ծրագիրը կ'ենթարկէ երկրին գրաւումը եւ միջապային քաղաքային կառավարիչի նշանակումը»:

Լիբանանեան օրաթերթերը նաեւ լուսարձակի տակ առած են Թուրքիոյ վարչապետին այցելութիւնը արաբական կարգ մը երկիրներ եւ անոր հանդիպումները նախագահներու եւ ղեկավարներու հետ: Մամուլը նաեւ անդրադարձած է Դամասկոսի մէջ 6 Յունուարին սկսած ամերիկեան - սուրիական երկրորդ երկխօսութեան, որուն ընթացքին պիտի կայանան քաղաքական եւ տնտեսական դոնփակ հանդիպումներ:

Ըստ «Սաֆիր»ի, Լահուտի եւ Հարիրի միջեւ եղած հարցը ըստ երեւոյթին վերջ գտաւ՝ քանի մը կէտով Լահուտի յաղթանակով. թերթը գրած է, թէ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի եւ ժողովաբար համաձայնութեան պիտոնները ի շահ ուսուցիչներուն եւ աշխատատեղերուն: «Անուար»ի համաձայն, բջիջային թղթածրարը կ'եփի տեղեկատուութեան հարցի կրակին վրայ. թերթը լուսարձակի տակ առած է այն երե-

ւոյթը, թէ Լահուտի եւ Հարիրի անհամաձայնութեան կեանքը կարճ է եւ երկրորդ արտերու լուսացումի հանդիպում մը պիտի կայանայ: «Լիւնա» արժարժած է այն հարցը, թէ «Նիւ. Թի. Վի.» ի խնդիրին մէջ կայ մուր կէտ մը: Նախագահ Լահուտ կը ծխուի այն պարագան, թէ ինք նախապէս տեղեակ էր, իսկ նախարարները կ'ըսեն, թէ իրենք նախապէս խորհրդակցած են անոր հետ: Ըստ թերթին, այս առնչութեամբ կապեր կը հաստատուին օրէնքի խախտում չարձանագրելու համար:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են այն լուրը, թէ Իսրայէլ կը սպառնայ Լիբանանը հարուածել: Ըստ թերթերուն, Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շաւու Մոֆապ յայտարարած է, թէ Լիբանանի ահաբեկչական ենթակառուցները պիտի հարուածէ, եթէ Հրկու պալլա օգտուի Իրաքի վրայ ամերիկեան յարձակումներէն եւ յարձակում գործէ իր հողերէն ներս:

Պաղեստինեան հարցին մասին «Մուսթաֆա» գրած է, թէ անձնասպանական գոյգ գործողութիւններուն պատասխանը տագնապ կը յարաբերուի թէ Միւրի եւ Լոնտոնի միջեւ. իսրայէլացիներ մեծաքանակ պատիժի կ'ենթարկեն պաղեստինցիները:

Ըստ «Նահար»ի, իսրայէլեան բռնարարները պատճառ դարձան, որ Լոնտոնի համագումարը չկայանայ: «Տիւրք» նշած է, թէ Ֆաթի Աբասի Փաղանգները կը պոռչացնեն, իսկ Շարունի խորհրդականը 8 Յունուարին Եգիպտոս պիտի մեկնի. դիւանագիտական վերականգնման իրադարձութիւնները կ'անհետան: «Մուսթաֆա» գրած է, թէ Լիբանանի խորհրդակցած է Լոնտոնի համագումարը, որով լուսարձակուած է Լոնտոնի յաւանգը: «Սաֆիր» գրած է, «Սատամ ՄԱԿի քննիչները կը դատաւարտէ լրտեսութեամբ, մինչ Պուշ կը պոռչացնէ՝ քննութիւնը կատարելէ. պատերազմի ամերիկեան ծրագիրը կ'ենթարկէ երկրին գրաւումը եւ միջապային քաղաքային կառավարիչի նշանակումը»:

Լիբանանեան օրաթերթերը նաեւ լուսարձակի տակ առած են Թուրքիոյ վարչապետին այցելութիւնը արաբական կարգ մը երկիրներ եւ անոր հանդիպումները նախագահներու եւ ղեկավարներու հետ: Մամուլը նաեւ անդրադարձած է Դամասկոսի մէջ 6 Յունուարին սկսած ամերիկեան - սուրիական երկրորդ երկխօսութեան, որուն ընթացքին պիտի կայանան քաղաքական եւ տնտեսական դոնփակ հանդիպումներ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՏԱՂՈՐՀՆԷՔ**

Ուրախութեամբ կ'ըզենք յայտնել մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ Կիրակի, 12 Յունուար 2003ին Ս. Յովնանուր Կարապետ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով, պիտի մատուցուի հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ:

Պիտի պատարագէ եւ մատաղօրհնէ կատարէ՝

**ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**  
(Առաջնորդ Լիբանանի հայոց թեմի)

Սկիզբ ժամերգութեան՝	Ժամը 7:30ին
Ս. պատարագ	Ժամը 9:30ին
Քարոզ՝	Ժամը 11:00ին
Մատաղօրհնէ եւ հոգեհանգիստ՝	Ժամը 12:00ին

Սիրով հրաւիրուած են բոլոր հաւատացեալները, հոգեպէս վերանորոգուելու օրում հոգեպարար արարողութեամբ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. ՅՈՎՆԱՆՈՒՐ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅ ԸՅԱՅԵՆ

**45 YEARS National Panasonic Technics**

**Panasonic FREE**

DVD-RA61 DVD-AV Player 5.1-ch, MP3, JAPAN \$6,500  
Worth: \$465

42" PLASMA [tau] \$9,500  
Worth: \$495

SC-HT75 One Package Home Theater with 5 DVD, MP3 \$300  
Worth: \$380

SC-AK600 3200W, 5 CD, Dolby Digital \$300  
Worth: \$180

TX-34P150X 100Hz, Text, RGB \$1,410  
Worth: \$180

TX-51P250X 100Hz, PIP, Text, JAPAN \$2,950  
TX-43P250X \$2,250

51" 43" GIGA

SC-AK600 Mini Compo 3200W, 5 CD Dolby Digital \$300  
Worth: \$300

Bring in your National Panasonic Technics TV, VCR, Movie Camera, Mini Compo, DVD, Portable Audio or Kitchen Appliance to our Service Center and get up to 45% discount on parts and labor. Valid from November 11 to 21, 2002, on products imported by Tutunjian Corp. S.A. Subject to availability of parts.

These offers are valid from November 1, 2002 to January 31, 2003

only on products guaranteed by TUTUNJIAN CORP. S.A. 04/712129-130, 711967, 03/243203 Fax: 04/712177, E-mail: TTC@cyberia.net.lb Add 10% VAT on above prices

Up To 45% DISCOUNT

**ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

**IGOL MOTOR OIL**





# Միջազգային Քաղաքական Կեանք

## ՊԱՏԵՐԱԶՄ ԻՐԱՔԻ ԴԵՍ

### ԺԱՄԿԷՏԸ ԿԸ ՄՆԱՅ ԱՆՈՐՈՇ

«Տը Քրիշչըն Սայրն Մոնիթոր» թերթը կը հաղորդէ, որ Իրաքի հետ զինուորական տագնապ մը հաւանական է, սակայն այս տագնապէն խուսափելու սեմարիոները շատ քիչ են: Թերթը կ'աւելցնէ, որ Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյն անգամ մը եւս փաստեց, որ ինք կրնայ յառաջ տանիլ քննադատները եւ միջազգային ընկերութեան հետ պահանջները լուրջ կերպով կ'արձարէր: Սատտամ Հիւսէյնը արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլի կիրակի, 29 Դեկտեմբերին փաստեց, որ ամերիկեան վարչաձեռքնան մեծ հանգարտութեամբ կը վերաբերի պատերազմի կոչերուն հետ: Պատկերասփիւռի ամերիկեան հինգ կայաններու հետ ունեցած տեսակցութեան ընթացքին Փաուըլը նաեւ մերժեց իսուիլի շիւսիսային Քորէայի հարցին շուրջ ստեղծուած «տագնապալի իրավիճակ»ին շուրջ: Ըստ Քոլին Փաուըլի, հակառակ անոր որ կացութիւնը վտանգաւոր է, սակայն ան կը պահանջէ խաղաղ լուծում մը, ինչպէս կը նշէ «Նիւ Եորք Թայմզ» թերթը:

Իրականութեան մէջ նախագահ Պոլսի վարչաձեռքնան յարմար չի գտնար Հիւսիսային Քորէայի մէջ զինուորական միջամտութեան մը մասին խօսելը, որովհետեւ անիկա տագնապի դուրս պիտի բանայ, ինչ որ Փիոնկեանկի փափաքն է: Թերթը նկատել կու տայ, որ «այս կացութիւնը կարելի չէ արդարացնել, մինչ ամերիկեան

զաս մը ըլլալ: Իրականութեան մէջ թերթը կը զգուշացնէ, որ «որեւէ ամերիկեան պատասխանատուութեան գեր կացուցումը վտանգ մըն է, որ կ'ամբարձրէ ամերիկեան այն տարածուած կարծիքը, թէ Միացեալ Նահանգներ պարզապէս աշխարհի տարածքին բարիք ստեղծելու եւ ազատութիւնները պաշտպանելու ձգտող ուժ մըն են»:

Սակայն ճորճ Պոլս կը նախատեսէ տնտեսական եւ դիւանագիտական յաւելում ճնշումներ բանեցընել Հիւսիսային Քորէայի վրայ՝ զայն իր կորիզային ծրագիրէն հրաժարեցնելու համար:

«Նիւ Եորք Թայմզ» օրաթերթին համաձայն, այս մէկը կը մտահոգէ Հարաւային Քորէայի ներդրողները: ճորճ Պոլս շի այս նախատեսումը կը սակաւգրով նաեւ Հարաւային Քորէայի նորընտիր նախագահ Ռօ Մոնթոնի առաջարկած ծրագիրին, ծրագիր մը, որ կը նպաստէ Հիւսիսային Քորէայի հետ առեւտուրի զարգացման:

Պոլսի վարչաձեռքնան կը փորձէ «փաստել, որ Փիոնկեանկ կը հակադրուի ո՛չ միայն Միացեալ Նահանգներուն, այլ նաեւ՝ ամբողջ աշխարհին»:

Հիւսիսային Քորէայի համար հարցի խաղաղ լուծում մը հաւանական է, եթէ Ուաշինկթըն համաձայնի ստորագրելու չզործածելու համաձայնագիր մը: Սակայն Միացեալ Նահանգներ սխալած կ'ըլլան, եթէ այս հարցին միջազգային ծաւալ տան:

«ՔՈՒՐԻԷ ԵՆԹԵՐՆԱՍԻՈՆԱԼ»

Գրականութեան ուժերը կը պատրաստուին ուղղուիլ դէպի Իրաքի սահմանները: Այս վերջինս ընդունած էր ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի քննիչները, մինչ Հիւսիսային Քորէա յայտարարեց, թէ ինք կը փափաքէ հեռացնել այդ քննիչները: Սակայն ճորճ Պոլս կը նախատեսէ տնտեսական եւ դիւանագիտական յաւելում ճնշումներ բանեցընել Հիւսիսային Քորէայի վրայ՝ զայն իր կորիզային ծրագիրէն հրաժարեցնելու համար:

«Նիւ Եորք Թայմզ» օրաթերթին համաձայն, այս մէկը կը մտահոգէ Հարաւային Քորէայի ներդրողները: ճորճ Պոլս շի այս նախատեսումը կը սակաւգրով նաեւ Հարաւային Քորէայի նորընտիր նախագահ Ռօ Մոնթոնի առաջարկած ծրագիրին, ծրագիր մը, որ կը նպաստէ Հիւսիսային Քորէայի հետ առեւտուրի զարգացման:

Պոլսի վարչաձեռքնան կը փորձէ «փաստել, որ Փիոնկեանկ կը հակադրուի ո՛չ միայն Միացեալ Նահանգներուն, այլ նաեւ՝ ամբողջ աշխարհին»:

Հիւսիսային Քորէայի համար հարցի խաղաղ լուծում մը հաւանական է, եթէ Ուաշինկթըն համաձայնի ստորագրելու չզործածելու համաձայնագիր մը: Սակայն Միացեալ Նահանգներ սխալած կ'ըլլան, եթէ այս հարցին միջազգային ծաւալ տան:

«ՔՈՒՐԻԷ ԵՆԹԵՐՆԱՍԻՈՆԱԼ»

## ԶԵՂԱՆԱՅԻՆ

### ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՉ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻՆ

Անգարայի պետական անվտանգութեան տեսանի նախկին ղեկավար զատախազ Նուրմէթ Եուքսէլ վերջերս դատ բացած է Թուրքիոյ մէջ գերմանական հինգ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու դէմ՝ զանոնք ամբաստանելով Թուրքիոյ ազգային շահերուն ի վնաս լրտեսութիւն կատարելու յանցանքով: Նախկին զատախազը դատը բացած է վերջերս սպանուած աղաքեմական Նեփիպ Հապլեմիտօղլուի գիրքին հիման վրայ: Ըստ գիրքին, գերմանական հինգ կազմակերպութիւնները Եգէականի Պերկամա գիւղին մէջ կազմակերպած են ցոյց մը, որուն ընթացքին գիւղացիները բողոքած են ոսկիի արտահանումի թրջական ծրագիրը մը դէմ: Ցուցարարները մտահոգութիւն յայտնած են աշխատանքի կենսոլորտային վտանգներուն համար:

Թուրք նախկին զատախազը ամբաստանագիրին մէջ պահանջած է յիշեալ կազմակերպութիւններուն ներկայացուցիչները 15 տարուան բանտարկութեան դատապարտել՝ «երկրին ապահովութեան դէմ դաւեր» ծրագրելու յանցանքով: Միւս կողմէ, սակայն, դատավարութեան առաջին օրերուն Թուրքիոյ մէջ գերմանացի պաշտօնատարները ժխտած են ամբաստանութիւնը՝ զայն կոչելով անհիմն: «Մենք իրաւասութիւնը չունինք Թուրքիոյ օրէնքին միջամուտ ըլլալու, սակայն նշեալ ամբաստանութիւնները անհիմն են», յայտնած է Թուրքիոյ մէջ Գերմանիոյ դեսպան Ռուտոլֆ Եմիթ:

#### ԱՆԳԱՄԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԵՐԱԳԱՅԻՆ ԹՈՒՐԲԻՈՅ 8,2 ՄԻԼԻԱՌ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ Ե. ՄԻՈՒԹԵՆԵՆ

Թուրքիոյ հետազոտութիւններու կեդրոնի նախագահ Ֆարուք Ալէն վերջերս յայտարարեց, թէ Թուրքիա, Եւրոպական Միութեան անդամակցութեան պարագային, պիտի ստանայ 8,2 միլիարտ եւրո:

Եւրոպական Միութեան Թուրքիոյ ստանալիք նիւթական շահին շուրջ Թուրքիոյ հետազոտութիւններու կեդրոնին ուսումնասիրութեան համաձայն, Թուրքիա Սպանիոյ հաւասար ընտ պիտի ըլլայ Եւրոպական Միութեան: «Մեր հաշուարկներուն համաձայն, Թուրքիա Եւրոպական Միութեան պիտի վճարէ 1,9 միլիարտ եւրո եւ պիտի ստանայ 10,2 միլիարտ եւրո: Տարբերութիւնը 20 միլիարտ եւրո չէ, ինչպէս կը պնդէ «Տայ Վեթ», այլ՝ 8 միլիարտ եւրո: Եւրոպական Միութիւնը 7 միլիարտ եւրո ծախսեց Սպանիոյ համար», նշեց ան:

Կեդրոնի փոխ նախագահ Դիլիպ Աբայա դիտել տուաւ, որ ուսումնասիրութիւնը կատարուած է Եւրոպական Միութեան 2001ի պիւտձէին հիման վրայ: Ան տեղեկացուց, որ Թուրքիոյ ստանալիք օժանդակ

Կեդրոնի փոխ նախագահ Դիլիպ Աբայա դիտել տուաւ, որ ուսումնասիրութիւնը կատարուած է Եւրոպական Միութեան 2001ի պիւտձէին հիման վրայ: Ան տեղեկացուց, որ Թուրքիոյ ստանալիք օժանդակ

## ՍԱՏՄԱՆ ԵՏԸ

### ԲՈՒՆԱԳՐԱԿՈՒՄ ՄԸ, ԶՈՐ ՈՉ ՄԷԿԸ Կ'ՈՒԶԷ

Դեկտեմբերի կէսերուն Լոնտոնի մէջ իրաքեան ընդդիմադիր ճակատի անդամներու հանդիմապետ մը աւելի անհամաձայնութիւններու բացայայտում էր, քան գործնական փոխզինումներու միջոցով միասնականութիւն ստեղծելու փորձ՝ ի խնդիր Իրաքէն դուրս գրուած քաղաքական ուժերով կառավարութեան մը կազմութեան: Հանգիստ մը վերջ գտաւ դաշնակցային կառավարութիւն մը հիմնելու եւ փոխհասկացողութիւն ստեղծելու տրամադրութիւններով: Խմբակցութեան միջազգային ընտանիքին խնդրեց օժանդակութիւն՝ յատկապէս Իրաքը գաղտնագրելու համար, սակայն անոնց հաղորդագրութիւնը մերժեց «Իրաքի որեւէ ձեւի բռնադատում, որեւէ զինուորական վարչակարգ, ըլլա՛յ օտար թէ տեղական, եւ՝ որեւէ արտաքին գերիշխանութիւն»:

Ամերիկեան քաղաքականութեան մասին եղած նախատեսութիւններուն մեծ մասը նկատի կ'առնէ Իրաքի գրաւումը եւ այնտեղ գնոր տնօրինութիւն

ամերիկեան ուժերու հաստատումը: Կ'ենթադրուի, թէ Ուաշինկթընի ակնկալած լաւախախնայ յաղթանակէն ետք, օտար զինուորական ներկայութիւն երկարատեւ իշխանութեան վրայ կրնայ պահել կարեւորագոյն ընդդիմադիր ուժերէ բաղկացած կառավարութիւն մը, ինչպէս որ կը կատարուի այսօր Աֆղանիստանի մէջ: Սակայն այլ հարց է, թէ արդեօք այս ընդդիմութիւնը առանց արտաքին միջամտութեան կրնա՞յ իշխանութեան վրայ մնալ:

Ժամանակի ընթացքին Իրաքեան ընկերութեան մէջ ճեղքերը կրնան վերստին յայտնուիլ: Միւսինի եւ շի իսլամներու, քրիստոնեաներու եւ քիւրտերու միջեւ տարբերութիւնները, ինչպէս նաեւ Պասա Կուկացութեան եւ կրօնական ուժերու միջեւ քաղաքական մրցակցութիւնը կրնան հարցեր ստեղծել:

Ահա այս ճեղքերն էին, որ պատճառ դարձան 1930ականներուն փոքրամասնութիւններու յե-

ղափոխութիւններուն եւ 1936էն 1941 զինուորական պետական 7 հարածածներու եւ այս բոլորը, երբ երկիրը բրիտանական իշխանութեան հովանիին տակ էր: 1958ին պետական այլ հարուած մը գահընկէց ըրաւ եւ սպաննեց թագաւորը, եւ հաստատեց հանրապետութիւն մը, ուր պետական կրօն սօր Աֆղանիստանի մէջ: Սակայն այլ հարց է, թէ արդեօք այս ընդդիմութիւնը առանց արտաքին միջամտութեան կրնա՞յ իշխանութեան վրայ մնալ:

1963ին եղած պետական այլ հարուածի մը իբրեւ արդիւնք՝ իշխանութեան ղեկը անցաւ Պասա Կուկացութեան ձեռքը եւ Սատտամ Հիւսէյնը դարձաւ երկրի ղեկավարը: Թէ երկիրը այսօր պատրաստ է դաշնակցային դրութեան մը եւ խաղաղութեան ծափող ջոններով պիտի հիւրընկալէ՝ ամերիկեան ուժերը, կը մնան թէական:

Իրաք եւ աշխարհը անկասկած աւելի լաւ վայրեր կը դառնան, եթէ Սատտամ Հիւսէյն իշխանութեան հեռացուի: Սակայն սկզբունքային հարցում է նաեւ, թէ Ուաշինկթընի կանխաւ միջամտելու քաղաքական

նութիւնը աշխարհը աւելի լաւ վայր մը կը դարձնէ՞ արդեօք: Այն կարծիքը, թէ միջազգային ընտանիքը իրականութեան միջոցով իրականութեան միջոցով ըլլալու, երբ աղէտալի վատութիւններ կը կատարուին, վերջին տարիներուն մեծամասնութիւնները շահած է: «Պատերազմի ոճի ճեղք» շահական գիրքին մէջ Տէյ-Վիտ Ռիֆ կը գրէ, թէ միւսին միջամտութիւնները «չափ ազդու են, բայց հանրապետութեան հեռու» ճշգրիտ ըլլալէ»: Խօսքը անշուշտ կ'ակնարկէ Եւրոպայի պատերազմին եւ Ռուսաստանի ցեղասպանութեան:

Միացեալ Նահանգներու կանխաւ միջամտելու մօտեցումը անհանգըստութիւն կը պատճառէ միջազգային ընտանիքին: Ուաշինկթընի համաձայն, երբեք հարկ է երկիրներ ներխուժել եւ վարչակարգի փոփոխութիւններ կատարել, որովհետեւ այդ երկիրներու վարչակարգերը ունին կամ ապագային կրնան ունենալ վտանգաւոր գէնքեր:

Միջազգային ընտանիքին անհանգստութիւնը

«ԻճԵՐՈՆԻ ԶԵՂ»

«ԻճԵՐՈՆԻ ԶԵՂ»

կութեան մեծ մասը պիտի ուղղուի գիւղատնտեսութեան մարզին: «Թուրքիա 5,14 եւրո պիտի ստանայ իր վճարած իւրաքանչիւր եւրոյին դիմաց: Յունաստան 4,23 եւրո ստացած է իր վճարած իւրաքանչիւր եւրոյին դիմաց», մանրամասնեց ան: Աբայայի համաձայն, Յունաստան իւրաքանչիւր քաղաքացիի համար կը ստանայ 539 եւրո, մինչ Թուրքիա պիտի ստանայ 149 եւրո:

#### ԻՐԱՆ - ԱՋՐՊԷՅՃԱՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ

Իրանի համագործակցութեան նախարար Ալի Սուֆի եւ Ազրպէյճանի փոխ վարչապետ Ալի Հասանով վերջերս ստորագրած են Նախիջեւանի ազրպէյճանական կազ տրամադրելու մասին համաձայնագիր մը: Համաձայնագիրը գոյացած է Թեհրան - Պաքո տնտեսական յանձնարումներին 5րդ հանդիպումի ծիրէն ներս: Հասանով ողջունած է յանձնարումները վերախուժացումը եւ նշած է, թէ Նախիջեւանի ազրպէյճանական կազ տրամադրելու, ճանապարհաչիւնութիւնը եւ սահմանային համագործակցութիւնը շահաբեր են երկու կողմերուն համար:

Իրանցի նախարարը դիտել տուած է, թէ փոխվարչապետներու եւ ըմբռնումի միջոցով մը գոյութիւն ունի երկու ժողովուրդներուն միջեւ, աւելցնելով, որ «Իրան երբեք չլքեց ազերի ժողովուրդը Ղարաբաղի տագնապին ընթացքին եւ կը շարունակէ մարդասիրական օժանդակութիւն տրամադրել ազերի գաղթականներուն»:

#### ԹՈՒՐԲԻՈՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԱՃԸ ԼՈՒՍԱՐՉԱԿԻ ՏԱԿ

Թուրքիոյ կիսապաշտօնական «Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Թուրքիոյ հանրապետութեան հիմնումի 100ամեակին՝ 2023ին, Թուրքիոյ բնակչութեան թիւը պիտի հասնի 90 միլիոն 448 հազարի:

Թուրքիոյ վիճակագրութեան պետական հիմնարկի հաշուարկին համաձայն, 2002ի կիսուն Թուրքիոյ բնակչութիւնը կը հաշուէր 69 միլիոն 757 հազար մարդ: Այդ թիւը այս տարուան կիսուն պիտի հասնի 70 միլիոն 885 հազարի:

Նոյն տեղեկագիրին համաձայն, Թուրքիոյ բնակչութեան թիւը 2005ին պիտի ըլլայ 73 միլիոն, 2010ին՝ 78 միլիոն, 2012ին՝ 80 միլիոն, 2020ին 87,8 միլիոն իսկ 2025ին՝ 92,9 միլիոն, տղամարդոց եւ կիներու հաւասար համեմատութեամբ:

#### ԻՐԱՆ - ԱՋՐՊԷՅՃԱՆ ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Ազրպէյճանի «Էյ. Էն. Էս.» հեռատեսիլի կայանը վերջերս հաղորդեց, թէ Ազրպէյճանի փոխ վարչապետ Ալի Հասանով եւ Իմամ Նուրմէյնիի օգնութեան միութեան տնօրէն Ռեզա Նայբի մարդասիրական օժանդակութեան համաձայնագիր մը ստորագրած են: Այս առթիւ Հասանով շնորհակալութիւն յայտնած է Իրանի մարդասիրական օժանդակութեան համար եւ յայտնած է, թէ Իրան - Ազրպէյճան յարաբերութիւններու վերջին զարգացումները արդիւնք են Հայտար Ալիեւի Իրան այցելութեան: Խարազի նշելով երկու երկիրներու նոյն կրօնի պատկանելիութիւնը՝ կարեւոր նկատած է շրջանին մէջ ապահովութեան եւ խաղաղութեան յաւանագրութեան հաստատումը: «Մենք գործադիր պիտի կանգնինք Ազրպէյճանի եւ Հայաստանի միջեւ քաղաքական բանակցութիւններուն, անոնց ղեկավարներու փոխադարձ հանդիպումներուն: Կը յուսանք, որ տագնապը շուտով կը լուծուի», ըսած է նախագի: Ան դիտել տուած է, թէ Իրան առաջին երկիրն էր, որ 1993ին օգնութեան հասաւ Լեռնային Ղարաբաղի տագնապին ընթացքին տեղափոխուած ազերիներուն:

«ԻճԵՐՈՆԻ ԶԵՂ»

«ԻճԵՐՈՆԻ ԶԵՂ»

Ուրախ լուր... սակերը նուազեցան

29 INCH TV \$499 +VAT	21 INCH TV \$219 +VAT	14 INCH TV \$139 +VAT
-----------------------------	-----------------------------	-----------------------------

ԱՐԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ

Պոլսի համարժեք Բաղադարան, Կոպարակ 360ԱՍՆԱՆ 01-241000

TOSHIBA







# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ԵՂՔ. ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԹԼԵԹԻԶՄԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՓՈԽ ԱՏԵՆԱՊԵՏ

Կիրակի, 5 Յունուար 2003, Լիբանանի արևելքի քաղաքի ֆեդերատիվ կենտրոնում տեղի ունեցավ ֆեդերատիվ անդամներու լրացուցիչ ընտրություններ: Եղբայր Վարուժան Գեորգեան միաձայնությամբ վերընտրվեց ֆեդերատիվ անդամ եւ վերստանձնեց փոխ ատենապետի պաշտոնը:

Ստորեւ՝ ֆեդերատիվ անդամներուն ամբողջական ցանկը.

Էմիր Ապտալա Շեհապ՝ ատենապետ  
Եղբայր Վարուժան Գեորգեան՝ փոխ ատենապետ

Ռեմոն Պրիլոբ՝ քարտուղար  
Տոնյա Նուրեդինյան Քուշ՝ գանձապահ  
Կարահիմ Մեհապ՝ հաշուապահ  
Կապի Իսա Խուրի՝ խորհրդակցական  
Զլեր Շեհապ՝ խորհրդակցական  
Նամաթալա Պրոթեզի՝ խորհրդակցական  
Ֆատի Սալամե՝ խորհրդակցական

## ՔԻԿԸՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ԶԷ ՖԱՈՒԼԸՐՈՎ

Մանչեսթերի Սիթի մարզիչ Քեյրի Քիլլըն իր կատարած վերջին հարցազրույցին ընթացքին ըստ, թե այդքան ալ հետաքրքրուած չէ իր կապիտան չեմպեյոն համար Լիոնել Ջանսեայի հետ: Քեյրի Քիլլընը որով հետեւեալ այժմ ամեն ճիշդ կր թափել Սեյթսի Լիոնելին փոխ ատենապետի համար հարաւային ափրիկեցի միջազգային մարզիչ Պենի Սաքարթին: Մաքարթին բացի, Քիլլըն մտտէն հետաքրքրուած է նաեւ Ալաքս Անթերտամի նախկին մարզիչ Միքայել Ռայցիկըրով, որ այժմ մաս կը կազմէ Պարսելոնայի:



Ռոպի Ֆաուլըր (ձախից)

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՇՏ ԵՒ ԹԱՏԱՍՈՆ ՍՈՒՐ՝ ՑԱՐԴ ԱՆՊԱՐՏԵԼԻ

Շուրջ ամսուան մը դադարէ ետք, անցեալ շաբաթավերջին վերսկսուեց Լիբանանի ֆուտբոլի Ա. դասակարգի ախոյեանութիւնը, երբ տեղի ունեցան 9րդ հանգրուանի մրցումները: Պարագլուխի դիրքը գրաւող Ահա 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ախա Ալի Ալէյը, աւելիով ամրապնդեց իր դիրքը եւ ունեցաւ 22 կէտ:

Թատամոն Սուր, որ Ահաի նման ցարդ պարտութիւն չկրող երկրորդ խումբն է, իր կարգին 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց պարտութեան մատնելով Սալամը:

Շապապ Սահէյ, որ արձանագրեց եղանակի իր առաջին յաղթանակը, 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Սաժէսը, վերջին դիրքէն բարձրացաւ 9րդ դիրքը:

Ստորեւ՝ 9րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մապարրա - Անսար	1-2
Սաֆա - Նըժմէ	1-3
Թատամոն Սուր - Սալամ	1-0
Պըրժ - Օլիմփիք	1-4
Ահա - Ախա Ալի Ալէյ	1-0
Շապապ Սահէյ - Սաժէս	2-0
Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ	ախոյեանութեան 10րդ

հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը «արձակուրդի» մէջ էր, որովհետեւ անոր մրցակիցը Շապապ Սահէյն էր: Նոյնն էր պարագան նաեւ Ռասիկի, որովհետեւ Ֆիթիան Սայտա եւս քաշուեցաւ ախոյեանութենէն:

Ստորեւ՝ 10րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Իժթիմահի - Մահապպա	3-2
Հ. Մ. Մ. - Հըրրիէ	5-3
Ռիտա Ուալ Ատապ - Ահի Սայտա	2-0
Շապապ Թրիփոլի - Իսլահ	1-1
Թատամոն Նապաթիէ - Նահտա	2-0

ՍՏՈՐԵՒ՝ Ա. եւ Բ. դասակարգի ախոյեանութեան դասաւորումը.

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ	ԿԷՏ
1.- Ահա	22 (14-5)
2.- Նըժմէ	16 (15-7)
3.- Թատամոն Սուր	16 (16-10)
4.- Օլիմփիք	13 (13-7)
5.- Պըրժ	13 (7-8)
6.- Անսար	12 (15-11)
7.- Սաժէս	11 (10-9)
8.- Սաֆա	6 (6-11)
9.- Շապապ Սահէյ	6 (8-14)
10.- Մապարրա	6 (9-17)
11.- Սալամ	5 (9-16)
12.- Ախա Ալէյ	5 (4-11)

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ	ՄՐՑ.	ԿԷՏ
1.- Հ. Մ. Ը. Մ.	8	24 (27-5)
2.- Հ. Մ. Մ.	8	16 (20-12)
3.- Շապ. Թրիփոլի	8	14 (10-6)
4.- Ռ. Ուալ Ատապ	8	13 (9-5)
5.- Ռասիկ	8	13 (12-11)
6.- Իսլահ	7	12 (13-6)
7.- Նահտա	9	12 (12-5)
8.- Իժթիմահի	8	10 (11-16)
9.- Թատ. Նապաթիէ	9	8 (9-17)
10.- Մահապպա	8	7 (10-17)
11.- Հըրրիէ	9	7 (8-18)
12.- Ահի Սայտա	8	3 (7-19)

## ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՓՈՐԹՈ ԻՆԸ ԿԷՏԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ ԱՌԱՋԻՆ

Փորթուգալի ֆուտբոլի ախոյեանութեան 16րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Փորթո, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պրական, այժմ ինը կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Պենֆիլիայի վրայ:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մատէյրա - Պէլեցենսէշ	1-1
Մորէյրենսէ - Մարիթիմո	2-2
Աքատենիքա - Վարզիմ	2-1
Սանթա Զլարա - Փաքոս Ֆերէյրա	0-0
Փորթո - Պրակա	3-0
Լէյրիա - Պասիսթա	1-0
Պէյրա Մար - Կիմարաշէշ	1-1
Սեթուալ - Սփորթինկ Լիզաոն	1-2

ԴԱՍԱԿԱՐԳ	ԿԷՏ
1.- Փորթո	42
2.- Պէլեցիքա	33
3.- Սփորթինկ Լիզաոն	31
4.- Կիմարաշէշ	30
5.- Վարզիմ	25
16.- Պէյրա Մար	15
17.- Մորէյրենսէ	14
18.- Սանթա Զլարա	13

## ԻՍՐԱՅԷԼ ՊԱՏԱՆԴ ...

Իսրայէլացի պաշտօնատարներ մեկնարանութիւն չկատարեցին: Կապալի մէջ պաղեստինեան աշխատանքի նախարարութենէն պաշտօնատար մը ըսաւ, որ 35 տարեկանէն վար 4 հազար գործաւորներ, որոնք նախապէս արտօնութիւն ստացած էին Իսրայէլ մտնելու, տուն վերադարձան: Իսրայէլ նաեւ արգիլեց պաղեստինեան պատուիրակութեան մը Լոնտոն ճամբորդութիւնը: Վարչապետ Թոնի Պլէր բանակցութիւններու հրաւիրած էր պաշտօնատարները՝ քննարկելու համար պաղեստինեան ներքին բարեկարգումներու ծրագիրը: Պաղեստինեան պատուիրակութեան մաս կը կազմէր Ուրայթաբը: Պլէր կոչ ուղղեց Շարոնի արտօնելու պաղեստինցի պատուիրակ-

## ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇՆՆԵՐ

### Դ. ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին Գ. հանգրուանի մրցումներէն ետք, տեղի ունեցաւ Դ. հանգրուանի մրցումներուն վիճակագրութիւնը: Մրցումները տեղի պիտի ունենան այս ամսուան աւարտին (25ին եւ 26ին): Բաժակակիր Արսենալ իր դէմ պիտի ունենայ ոչ արհեստավարժ Ֆառնպորթ Թատուն խումբը: Հակա-

ոսկ Կորաուր խումբ մը իր դէմ ունենալուն, Ֆառնպորտի մարզիչ Կրեյքմ Ուեսթլի կ'ըսէ, թէ իր կապմը այժմէն իսկ պատրաստ է հիւրընկալելու մարզիչ Արսեն Վենկերի կապմը, հակառակ անոր որ Արսենալ կը գրաւէ բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան պարագլուխի դիրքը:

Գ. դասակարգի կապմերէն Շրուպըրի, որ 3րդ հանգրուանին մրցաշարքին դուրս ձգեց Էվըրթընը, իր դէմ պիտի ունենայ այլ Կորաուր խումբ մը՝ Չելսին: Լիվըրփուլ հիւրը պիտի ըլլայ Քրիսթալ Փալասի (Ա. դասակարգ), իսկ Մանչեսթըր Եունայթըտ իր դաշտին՝ «Օլդ Թրեֆորտ» մէջ պիտի հիւրընկալէ Ուեսթ Համը: Բարձրագոյն դասակարգին մաս կապմող խումբերէն Պլէյպարըն իր դէմ պիտի ունենայ Պոլթըն - Սանտրլիքստ մրցու-

մին յաղթականը, իսկ Ֆուլհէմ՝ Չարլթընը: Ստորեւ՝ Դ. հանգրուանի մրցումներուն վիճակագրութիւնը. Նորիչ կամ Պրայթըն - Փլայմութ կամ Տէլքընհէմ - Մաութհիլմըր - Զարտիֆ կամ Զոլդենթորփ - Ֆուլհէմ - Չարլթըն - Շեֆիլտ Եունայթըտ - Իփսուիչ - Շրուպըրի - Չելսի - Սթըք - Պոլտըն - մաութ կամ Զրու - Պրեմֆորտ - Կրիսթալ կամ Պոլտըն - Իփսուիչ - Շարուպըր Եունայթըտ - Ուեսթ Համ - Կիլինկհէմ կամ Շեֆիլտ Ուեսթհէմ - Լիք - Վուլվը - Լայպըր Սիթի - Ուեսթհէմ - Ուեսթ Պրոմութի - Զրիսթալ Փալաս - Լիվըրփուլ

## ԹԵՆԻՍ

### ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Ճէյմս Պլէյք եւ Սերենա Ուիլյամս՝ իրենց շահած բաժակով

Նիւ Տեյխի մէջ (Հնդկաստան) տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան արձանագրեց իր երկրորդ յաղթանակը, երբ Բ. հանգրուանի իր կատարած մրցումին, 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց սպանացի իր մրցակիցը՝ Մոնտանէսը:

● ԲԱՆՊԵՐՈՒՅԻ մէջ (Աւստրալիա) տեղի ունեցող աղջկանց միջազգային մրցաշարքին, 6րդ դասուած Վոլիցերիահայ Մարի-Գայիանէ Միքայելեան Ա. հանգրուանին իր կատարած մրցումին, 7-5 եւ 6-4 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք իտալացի Ատրիանա Սերրա - Չանթթիէն, դուրս մնաց մրցաշարքէն:

● ՕԲԼԷՆՏԻ մէջ (Նոր Զելանդա) տեղի ունեցող տղոց մրցաշարքի Ա. հանգրուանին իր կատարած մրցումին, 2րդ դասուած արձանաթիւնահայ Դաւիթ Նալպանտեան 2-6, 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Մարիա-Նո Չապայեթային, դուրս մնաց մրցաշարքէն:

● ԹԵՆԻՍԻ միջազգային ֆեդերատիվի շաբաթակիցի իրապարակեց աղջկանց 2003 տարուան առաջին դասաւորումը, ուր ամերիկացի Սերենա Ուիլյամս բազմաժամ կը մնայ պարագլուխի դիրքին վրայ, շուրջ 1100 կէտի առաւելութիւն մը ունենալով 2րդ դիրքը գրաւող իր քրոջ՝ Վինյաի վրայ:

Նշենք, թէ անցեալ շաբաթավերջին, Սերենա իր ազգակիցին՝ Ճէյմս Պլէյքի հետ շահած էր «Նոլմըն» բաժակի մրցաշարքին տղոց եւ աղջկանց անհատական տիտղոսը: Պլէյք պարտութեան մատնած էր Լէյթըն Նոլթը, իսկ Ուիլյամս՝ Ալիսիա Մոլիքը:

## ԱՐԱՍ ՀԱՃԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՍՈՒԹ ԼԷՅՔ ՍԻԹԻ ԶՍԵՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ

Յառաջիկայ Փետրուարին, Սուր Լէյք Սիթիի (Մ. Ն.) մէջ տեղի ունենալիք ձմեռնային Ողիմպիականի մրցումներուն մասնակցելու իրաւունք ստացաւ հայրենի դահուկարշաւ Արամ Հաճեան, Ողիմպիականի գտումի մրցումներուն լաւ արդիւնք արձանագրելէ ետք: Այսպիսով, հինգի բարձրացաւ Հայաստանի մասնակցողներուն թիւը. երկու լեռնային դահուկարշաւներ, երկու պոպպլէս եւ մէկ դահուկարշաւ:

**ՎԱՆԷ ՓՈԽՄԱՆ ՍՐՔՈՅ ԿՈՅՄԻՆ - ՉՄԱՍ**

Հեռ. 09-262706 կամ 09-262664

**ՉՄԱՍԻ ՎԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**ԿԻՐԱԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԺԱՄԵՐԸ**

(Կիրակի 12 Յունուար 2003էն սկսեալ)

Ժամը	8:00ին Սուրբ պատարագ
Ժամը	9:45ին առաւօտեան ժամերգութիւն
Ժամը	10:30ին ձայնաւոր Սուրբ պատարագ
Ժամը	19:00ին երեկոյեան ժամերգութիւն

**ԱԶԳ. ՆՈՒՊԱՐԵԱՆ - ԽՐԻՍՏԵԱՆ  
ՄԵՉՆԱԿԱՐԳ ՎԱՐՄԱՐԱՆ**

**ՃԱՇԿԵՐՈՅՈՒՄ - ՊԱՐԱՎԱՆԴԵՍ**

Բարձր հովանաւորութեամբ  
**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ.**  
**ԽԱՉԵՐԵԱՆԻ**

Առաջնորդ Լիբանանի Լայոնց թեմի  
Նախագահութեամբ  
Պետական երեսփոխան  
**ՍՈՒՐԱՄԵՏ ՍԱՖԱՏԻ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 11 Յունուար 2003, երեկոյեան ժամը 10:00էն սկսեալ, Թրիփոլի «Զուլիթի Իճ» պանդոկի շքեղ սրահին մէջ:



# ՆԱԻԱՍԱՐԴ

## ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Բ. ՏԱՐԻ

Թի 6

ՅՈՒՆՈՒԱՐ 2003

### Հ.Մ.Ը.Մ. - ՀԱՄԱԿԻՐ ՊՈՐՏԱԿԱՊԸ ՓԱՍՏՕՐԷՆ ԿԸ ՄԼԱՅ ԱՆՔԱԿՏԵԼԻ

Կիրակի, 29 Դեկտեմբեր 2002ին պէտք էր Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտը ըլլայ՝ ըմբռնելու համար այս գրութեան խորագիրը: Միայն թերահաւատները եւ մտքով կոյրերը կրնան չտեսնել ու չհաստատել ըսուածը: Իսկ հակառակը պնդողը, կամ յայտարարողը՝ թէ այդ օր Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի համակիրներուն թիւը մամուլով եռապատկած ենք եղեր, պարզապէս կը նշանակէ, թէ համբել չի գիտեր, կամ ստորակայութեան բարդոյթը պինք կը մղէ նման խեղճուկ ու ծիծաղելի յայտարարութիւններ կատարելու: Շատ հաւանաբար վերջինը ամէնէն ճիշդն է... Յամենայնդէպս, հայկական առածը կ'ըսէ. մենք խաղողը պիտի ուտենք, այգեպանը պիտի չծածենք:

Եւ այդ օր մենք խաղողը կերանք: Որովհետեւ մեզի համար կանաչ դաշտին վրայ յաղթանակն էր հականը եւ ոչ՝ թրիպիւններուն մէջ: Պարզապէս որովհետեւ թրիպիւններուն մէջ մենք եղած ենք մի՛շտ յաղթական: Լիբանանեան բանաւոր եւ գրաւոր մամուլը երբ կը հաստատէ, թէ այդ օր Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները կը հաշուէին աւելի քան վեց հազար, երբ անոնք կը յայտարարէին, թէ Ա. դասակարգի շատ մը խումբեր չունին նման խումբերամ համակիրներու բանակ, հակառակը գրող, աւելի ճիշդ՝ մրոտող խեղճուկներուն վիճակը ա՛յլ աւելի կը խեղճանայ պարզապէս...

Չարմանալին հոն է, սակայն, որ մարդիկ կը վարմանան Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն պարզած այս վիճակին ի տես: Ըստ երեւոյթին անոնք տակաւին չեն սորված, որ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները միշտ այսպէս եղած են, դաշտ «խուժելու» կոչելու կամ «հրահանգներու» պէտքը չեն ունեցած, որովհետեւ հաւատացած են իրենց խումբին, անոր միութենական գաղափարախօսութեան, անոր դրօշակին, անոր վեհ գաղափարին: «Հրահանգով» դաշտ գալու մասին կրնայ մտածել միայն թիւով խեղճը, տկարը, եւ բնականաբար կը խորհի, թէ ամէն խումբ իրեն նման կը գործէ: Ո՛չ սիրելիներ, մենք «հրահանգ»ի կարիքը չունինք, իսկ եթէ «հրահանգենք», ապա դաշտը պէտք է փոխել եւ փոխադրել շատ աւելի մեծ ու լայն թրիպիւններով դաշտ, ուր կրնանք հապի բաւել:

Հուսկ: Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները կը մնան անդրդուելի ու համոզուած: Անոնց թիւը կը բազմապատկուի, որովհետեւ խումբին նկատմամբ կայ միայն ու միայն հաւատք, համակ նուիրում, անշահախնդիր մօտեցում: Որովհետեւ անոնք դաշտ չեն ուղղուի միայն օդով լեցուն կլոր կաշիին սովորական պայքարին համար, այլ նա՛եւ այդ պայքարը հայո՛ւն վայել կամքով տանելու առաջադրանքով: Եւ փաստօրէն այդպէս է: Այս է միակ պատճառը, որ Հ.Մ.Ը.Մ. կը սարսափեցնէ իր մրցակիցները դաշտին վրայ: Անոնք շատ լաւ ըմբռնած են մեր այս իւրայատկութիւնը եւ ըստ այնմ դաշտ կը ներկայանան Հ.Մ.Ը.Մ.ի դէմ: Ահա թէ ի՛նչու Հ.Մ.Ը.Մ. - համակիր պորտակապը կը մնայ անքակտելի ու ամուր:

Կարելի չէ շողացող աստղին առջեւ վարագոյր քաշել:

### ՃԱՏՐԱԿ

### Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ԿԸ ՀՆՁԷ ՄԵԾԱԹԻ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ



Լիբանանի ճատրակի ֆետերասիոնը Շաբաթ, 28 Դեկտեմբերին յատուկ հանդիսութեամբ մը պատուեց Լիբանանի ճատրակի ախոյեանները եւ բաժակներ ու մրցանակներ բաժնեց անոնց:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան եւ Պէյրութի քաղաքապետ Ապտէլ Մընեմ Արիս:

Վերտնի «Ժամիթ Պէյրութ Լիթանմիյէ»ի սրահին մէջ տեղի ունեցող մրցանակաբաշխութեան, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի ճատրակի երէցներու եւ կրտսերներու խումբերը հնձեցին լիբանանեան սկուլմբերու մէջ ամէնէն աւելի բաժակներն ու մետալները:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի 2002ի նուաճումներուն ընդհանուր պատկերը:

#### ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻՆ

Սիւզան Մուրատեան՝ առաջին, Քնարիկ Մուրատեան՝ երրորդ: Այստեղ նշենք, որ Մուրատեան քոյրերը 1995էն ի վեր իրենց մենաշնորհը դարձուցած են Լիբանանի աղջկանց տիտղոսը:

#### ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՆՉԵԻ 20 ՏԱՐԵԿԱՆ ՏՂՈՑ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻՆ

Սերժ Յովնանեան՝ ախոյեան:

#### ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՆՉԵԻ 20 ՏԱՐԵԿԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻՆ

Քնարիկ Մուրատեան՝ ախոյեան:

#### ԼԻԲԱՆԱՆԻ ՃԱՏՐԱԿԻ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻՆ

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս՝ Յրդ:

#### ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՆՉԵԻ 10 ՏԱՐԵԿԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻՆ


Մեղրի Կիրակոսեան՝ երկրորդ:

#### ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՆՉԵԻ 12 ՏԱՐԵԿԱՆ ՏՂՈՑ ԱԽՈՅԵԱՆՆԵՐԻՆ

Հրակ Փափագեան՝ երրորդ:

ملحق آرژانك

# 2003Ի ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑ



2003ը կը հանդիսանայ մարզական իրադարձութիւններով հարուստ այլ տարի մը: Ճիշդ է, թէ ֆութպոլի Եւրոպայի ախոյեանութիւնը եւ Ողիմպիական խաղերը տակաւին հեռու են, սակայն այս գոյգ մարզական մեծագոյն շքահանդէսներուն զտումի եւ նախապատրաստական փուլերը արդէն սկսած են:

Ստորեւ կը ներկայացնենք ֆութպոլի, թենիսի, «Ֆորմիւլա 1»ի, գեղասահքի, փինկ -

փոնկի, ճիւտոյի եւ հեծելարշաւի կարեւորագոյն իրադարձութիւններուն օրացոյցը:

## ՅՈՒՆԻՍ

- 13 - 26 թենիս, Աւստրալիոյ բաց մրցաշարք
- 20 - 26 - գեղասահք, Եւրոպայի ախոյեանութիւն (Մալմոյի մէջ)

## ՓԵՏՐՈՒՄ

- 18 - 19 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ»
- 20 - ֆութպոլ, UEFA բաժակ (Դ. հանգրուան)
- 24 - Մարտ 2 - Գեղասահք, աշխարհի կրտսերներու ախոյեանութիւն (Օսթրալիայի մէջ)
- 25 - 26 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ»
- 27 - ֆութպոլ, UEFA բաժակ (Դ. հանգրուան)

## ՄԱՐՏ

- 9 - «Ֆորմիւլա 1», Աւստրալիոյ «կրան փրի»ն (Մելպուռն)
- 11 - 12 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ»
- 13 - ֆութպոլ, UEFA բաժակ (քառորդ աւարտական)
- 18 - 19 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ»
- 20 - ֆութպոլ, UEFA բաժակ (քառորդ աւարտական)
- 23 - «Ֆորմիւլա 1», Մալեզիոյ «կրան փրի»ն (Սեփանկ)
- 24 - 30 - Գեղասահք, աշխարհի ախոյեանութիւն (Ուաշինկթըն)
- 29 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ
- 29 - Ապրիլ 6 - փինկ փոնկ, Եւրոպայի ախոյեանութիւն (Իտալիա)

## ԱՊՐԻԼ

- 2 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ
- 6 - «Ֆորմիւլա 1», Պրագիի «կրան փրի», (Սան Փաուլօ)
- 8 - 9 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ» (քառորդ աւարտական):
- 10 - ֆութպոլ, UEFA բաժակ (կիսաւարտական)
- 20 - «Ֆորմիւլա 1», Սան Մարինոյի «կրան փրի» (Իմոլա)
- 22 - 23 - «Չէմփիընզ Լիկ» (քառորդ աւարտական)
- 24 - ֆութպոլ, UEFA բաժակ (կիսաւարտական)

## ՄԱՅԻՍ

- 4 - «Ֆորմիւլա 1», Սպանիոյ «կրան փրի» (Պարսելոնա)
- 6 - 7 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ» (կիսաւարտական)
- 13 - 14 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ» (կիսաւարտական)
- 15 - 18 - ճիւտոյ, Եւրոպայի ախոյեանութիւն (Աթէնք)
- 18 - «Ֆորմիւլա 1» Աւստրիոյ «կրան փրի» (Սփիլպըրկ)
- 19 - 25 - փինկ - փոնկ, աշխարհի ախոյեանութիւն (Փարիզ)
- 21 - ֆութպոլ, UEFA բաժակ (աւարտական)
- 26 - Յունիս 8 - թենիս, Ֆրանսայի բաց մրցաշարք
- 28 - ֆութպոլ, «Չէմփիընզ Լիկ» (աւարտական)

## ՅՈՒՆԻՍ


- 1 - «Ֆորմիւլա 1» Մոնաքոյի «կրան փրի» (Մոնթէ Գարլօ)
- 7 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ
- 11 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ
- 15 - «Ֆորմիւլա 1», Քանադայի «կրան փրի»ն (Մոնրէալ)
- 23 - Յունիս 6 - թենիս, Ուիմպլտընի մրցաշարք
- 29 - «Ֆորմիւլա 1» Եւրոպայի «կրան փրի»ն (Նիւրպըրկուինկ)

## ՅՈՒՆԻՍ

- 5 - 27 - հեծելարշաւ, Ֆրանսայի շրջափազք
- 6 - «Ֆորմիւլա 1», Ֆրանսայի «կրան փրի»ն (Մանյի Գուր)
- 20 - «Ֆորմիւլա 1», Բրիտանիոյ «կրան փրի»ն (Սիլվըրսթոն)

## ՕԳՈՍՏՈՍ

- 3 - «Ֆորմիւլա 1», Գերմանիոյ «կրան փրի»ն (Հոքընհայմ)
- 24 - «Ֆորմիւլա 1», Հունգարիոյ «կրան փրի»ն (Պուտափէշթ)
- 25 - Սեպտեմբեր 7 - թենիս, Ամերիկայի բաց մրցաշարք



## ՍԵՊՏԵՄԲԵՐ

- 6 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ
- 6 - 28 - հեծելարշաւ, Սպանիոյ շրջափազք
- 10 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ
- 11 - 14 - ճիւտոյ, աշխարհի ախոյեանութիւն (Օսաքա)
- 28 - «Ֆորմիւլա 1» Ամերիկայի «կրան փրի» (Ինտիանափոլիս)

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

- 11 - ֆութպոլ, «Եւրո 2004»ի զտումներ:
- 12 - «Ֆորմիւլա 1», Ճափոնի «կրան փրի»ն (Սուզուլքա)

## ՆՈՅԵՄԲԵՐ

Ճիւտոյ - Եւրոպայի կրտսերներու ախոյեանութիւն:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

14 - 21 փինկ փոնկ - աշխարհի կրտսերներու ախոյեանութիւն

# 2002 - ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԻՆ

## ԱԹԼԵԹԻԶՍ

### ՀԱՅԱՍՏԱՆ ԾԱՀԵՑԱԻ 3 ՈՍԿԻ ԵՒ 1 ԱՐԾԱԹ ՄԵՏԱԼՆԵՐ

Երկուշաբթի, 28 Հոկտեմբերին, Կիպրոսի մէջ աւարտեցաւ աթլետիկայի միջազգային մրցաշարքը, որուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հայաստան, այլ երկիրներու կարգին:

Հայաստան յաջողեցաւ շահիլ երեք ոսկի եւ մէկ արծաթ մետալներ, այդ ալ շնորհիւ Վանաձորի աթլետներուն:

Աղջկանց 200 եւ 400 մետր վազքի մրցումներուն Մարինէ Ղազարեան շահեցաւ 2 ոսկի մետալներ:

Իսկ տղոց պարագային Արսէն Սարգսեան երեք քայլ ոստումի մէջ շահեցաւ ոսկի մետալ մը, իսկ մէկ քայլ ոստումի մէջ՝ արծաթ մետալ մը:

## ԸՍԲՇԱՍԱՐՏ

### ԳԵՂԱՄ ԲԱԲԱՆԱՆԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ

Կիրակի, 4 Օգոստոսին Վիլնիուսի մէջ (Լիթվանիա) աւարտեցան Եւրոպայի պատանիներու ըմբշամարտի ախոյեանութեան մրցումները, որոնք տեղի ունեցան տարբեր դասակարգերու մէջ:

46 քիլոկրամ դասակարգին մէջ, Եւրոպայի ախոյեան հանդիսացաւ Գեղամ Բաբանեան, որ իրապէս արժանի էր ադ տիտղոսին, իր կատարած վեց մրցումներն ալ յաղթանակով աւարտելով:

42 քիլոկրամ դասակարգին մէջ Սուրէն Ադեան իր կատարած վեց մրցումներէն հինգին յաղթանակ արձանագրելով՝ գրաւեց 3րդ դիրքը:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՉԱՆԱԳՐԵՑ ԼԱՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Փետրուարի վերջը, Իրանի մէջ տեղի ունեցաւ յունահունական ոճի ըմբշամարտի աւանդական միջազգային հանրածանօթ մրցաշարքը նուիրուած՝ իսլամական յեղափոխութեան տարեդարձին:

Հայաստան, որ իր մասնակցութիւնը կը բերէր 14 ըմբիշներով, յաջողեցաւ բաւական լաւ արդիւնք արձանագրել եւ մրցաշարքին աւարտին գրաւել երկրորդ դիրքը՝ Իրանի ետին: Երրորդ դիրքը գրաւեց Ազրայէձան: Երկրորդ դիրքը գրաւելէն բացի, հայ ըմբիշները հայրենիք վերադարձան շահելով մէկ առաջնութիւն, երեք՝ երկրորդութիւն եւ մէկ՝ երրորդութիւն: Այս մրցաշարքը ընդհանրապէս կ'ըլլայ իւրաքանչիւր տարուան առաջին եւ կարեւորագոյն մրցաշարքերէն մէկը, ինչ որ պատճառ կը հանդիսանայ մարզիչներուն՝ ընտրելու համար իրենց ազգային խումբը:

87 քկ. դասակարգին մէջ, ախոյեան հանդիսացաւ Լեւոն Գեղամեան: 55 քկ. դասակարգին մէջ, յաջորդաբար 2րդ եւ 3րդ տեղերը գրաւեցին Արտաշէս Մինասեան եւ Աշոտ Խաչատրեան: 74 քկ. դասակարգին մէջ երկրորդ դիրքը գրաւեց Մովսէս Կարապետեան, իսկ 96 քկ. դասակարգին մէջ՝ Ռոպէր Պետրոսեան:

Նշենք, թէ այս մրցաշարքին ընթացքին

մրցումներուն իրաւարարներուն կարգին էին Գէորգ Ալեքսանեան եւ Գագիկ Եղիազարեան:

### ՔՐԻՍՏԻՆԷ ՆԱՃԱՐԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒՀԻ

Հինգշաբթի, 5 Սեպտեմբերին երեւանցի Քրիստինէ Նաճարեան, ըմբշամարտի «կուրաշ»ի (իւզպէքական ըմբշամարտ) աշխարհի ախոյեանութեան 52 քկ. դասակարգի մրցումներուն հանդիսացաւ առաջին՝ յաղթանակով աւարտելով իր չորս մրցումները:

### ԱՐԱՄ ՄԱՐԱՐԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ՓՈՒՆ ԱՆՈՅԵԱՆ

Հայաստանը ներկայացնող ազատ ոճի ըմբիշ Արամ Մարգարեան Թեհրանի մէջ տեղի ունեցող աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, որ տեղի ունեցաւ Կիրակի, 8 Սեպտեմբերին 60 քկ. դասակարգին մէջ հանդիսացաւ փոխ ախոյեան:

### ԱՐԱ ԱՐԱՎԱՍԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Յունահունական ըմբշամարտի աշխարհի ախոյեանութեան 84 քիլոկրամ դասակարգի մրցումներուն, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 21 Սեպտեմբերին ոսկիէ մետալին արժանացաւ շուէտահայ Արա Աբրահամեան, աւարտական մրցումին պարտութեան մատնելով Ալեքսանտր Մեշնիքովը:

Աբրահամեան, որ 2001ին նոյնպէս հանդիսացած էր աշխարհի ախոյեան, կիսաաւարտականին տապալած էր թուրք Համզա Երլիքայան: Այս վերջինը Սիտնիի ողիմպիական խաղերուն շահած էր յունահունական ըմբշամարտի ոսկի մետալը:

Հայաստանը ներկայացնող Աշոտ Խաչատրեան եւ Լեւոն Գեղամեան հասան կիսաաւարտական, սակայն պարտութիւններ կրեցին եւ չկրցան տիրանալ պրոնզ մետալին:

2 անգամ ողիմպիականի ոսկի մետալ շահած Արմէն Նազարեան 60 քկ. կշիռքի դասակարգին մէջ իր առաջին 2 մրցումները յաղթանակով աւարտեց: Ան իր կշիռքի տիտղոսին գլխաւոր թեկնածուն է:

### ԱԶԱՏ ՈՃԻ ԸՍԲՇԱՍԱՐՏ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

#### ՈՍԿԻ ՄԵՏԱԼԸ ԹՈՒՐԲԵՆ ՎԵՐԱԳԱՐՉՈՒԵՑԱԻ ՀԱՅՈՒՆ

Իրանի մայրաքաղաք Թեհրանի մէջ, Կիրակի, 8 Սեպտեմբերին աւարտեցան աշխարհի ազատ ոճի ըմբշամարտի ախոյեանութեան մրցումները: 60 քիլոկրամ դասակարգին մէջ աւարտական հանգրուան հասած էին հայ եւ թուրք ըմբիշներ՝ Արամ Մարգարեան եւ Հարուն Տողան: Թուրք մարզիկը յաղթանակ մը արձանագրելով տիրացած էր ոսկի մետալին եւ հռչակուած՝ աշխարհի ախոյեան:

Սակայն, կասկածներ կային, որ Տողան խթանիչ դեղեր կրնայ գործածած ըլլալ: Այդպէս ալ դուրս եկաւ. թուրք մարզիկին երկրորդ քննութիւնները ատիկա հաստատեցին եւ Հարուն Տողան ստիպուեցաւ վերադարձնել ոսկի մետալը:

Ըմբշամարտի միջազգային ֆետերասիոնը

հեռաձայնով կապի մէջ մտաւ Հայաստանի Ազգային Ողիմպիականի Կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանի հետ եւ հաղորդեց, որ հայրենի ըմբիշ Արամ Մարգարեան կը հռչակուի աշխարհի ախոյեան:

Արծաթ մետալին տիրացաւ պուլկարացի Տամիան Տամիանով (450 քկ.), իսկ պրոնզ մետալին՝ ուքրանացի Արթիոմ Ուտաշին:

## ՃԱՏՐԱԿ

### ԷԼԵՆԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ՝

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԱՆՈՅԵԱՆ

Հայաստանի ճատրակի աղջկանց ախոյեանութեան մրցաշարքին աւարտին, (Կիրակի, 14 Յուլիսին) էլենա Դանիէլեան չորրորդ անգամ ըլլալով հանդիսացաւ ախոյեան, Լիլիթ Գալոյեանի հետ իր կատարած չորրորդ եւ վերջին հանդիպումին հաւասարութիւն մը արձանագրելով:

Հակառակ անոր որ Դանիէլեան իր կատարած առաջին մրցումին պարտութիւն մը կրեց Գալոյեանէն, սակայն երկրորդին եւ երրորդին տիրապետելով իր մրցակիցին վրայ, տարաւ վերջնական յաղթանակը՝ 2,5 - 1,5 արդիւնքով:

Ոսկի մետալ ստանալէ բացի, Դանիէլեան ստացաւ 250 հազար դրամ, իսկ Գալոյեան իր ստացած արծաթ մետալին կողքին ստացաւ 150 հազար դրամ:

3րդ դիրքը գրաւեց Գոհար Հըլլաթեան, ստանալով 80 հազար դրամ, իսկ 4րդ դիրքը՝ Լիլիթ Մկրտչեան, որ ստացաւ 60 հազար դրամ: 5էն 8րդ դիրքը գրաւողները ստացան 40ական հազար դրամ, իսկ 9էն 13րդ դիրքը գրաւողները՝ 15ական հազար դրամ:

## ԿՈՓԱՍԱՐՏ

### ԱՐԹԻՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝

#### ԴԱՐՉԵԱԼ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Միջազգային կուսմարտի կազմակերպութեան (Տապլիոլ. Պի. Օ.) թեթեւ կշիռի աշխարհի ախոյեանութեան ճակատումին, հայազգի Արթիւր Գրիգորեան Շաբաթ, 14 Սեպտեմբերին, պարտութեան մատնեց իտալացի Ստեֆանո Զոֆը:

Արթիւր Գրիգորեան արհեստավարժ դարձած է 1995ին եւ 1996էն ի վեր կը պահէ իր կշիռի աշխարհի ախոյեանի տիտղոսը:

Ան ցարդ 7 անգամ յաջողութեամբ պաշտպանած է իր տիտղոսը:

Գրիգորեան ծնած է 20 Հոկտեմբեր 1967ին, Թաշկենտ, Իւզպէքիստան: Ան այս մարզը սկսած էր կիրարկել 11 տարեկանին: Ամուսնացած է եւ ունի երեք աղջնակներ:





# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒԹՊՈՒԼԻ ԱՍՏՂԵՐԷՆ՝ ՎԱՐՎԱՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ ՀԵՏ

«Նաւասարդ» այսուհետեւ իր իւրաքանչիւր թիւով պիտի ունենայ հարցազրոյց մը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ֆութպոլի ներկայացուցչական խումբի մարզիկներուն, պատասխանատուներուն հետ: Բոլորին առիթ պիտի տրուի ընթերցող - համակիր մեր շրջանակին հետ այս ձամբով «հաղորդակցելու»:  
Մեր հարցազրոյցներու շարքը կը սկսի հայրենի աստղ Վարդան Ղազարեանով: Մեր յաջորդ մարզիկը պիտի ըլլայ խմբապետ Դո Քեփեան:

տինք մեր մարզիչին՝ Վաչէ Սարգիսեանին, որուն ցուցմունքները դաշտին վրայ կ'օգտագործենք առաւելագոյն ձեւով:

Հ.- Յետադարձ ակնարկ մը կատարելով, արդեօք կրնա՞ս հակիրճ ձեւով ներկայացնել, նախքան Լիբանան ժամանելով. ո՞ր խումբերուն մաս կազմած ես եւ ի՞նչ յաջողութիւններ ունեցած ես անոնց հետ:

Պ.- Պատանեկութեանս առաջին խումբը եղած է Կապանի Սիւնիքը, ուր յաճախած եմ եօթ տարեկանիս: Անոր հետ առաջին անգամ իբրեւ հիմնական մարզիկ դաշտ ներկայացած եմ 1987 թուականին: Երկու տարի ետք արդէն իսկ հանդիսացանք Հայաստանի ախոյեան: 1990ին միացայ Հոկտեմբերեանի Սպարտակ խումբին:

Տարի մը ետք վերադառնալով նախկին խումբիս, դարձեալ հանդիսացանք Հայաստանի ախոյեան: 1991ին նաեւ հանդիսացայ երկրին կոլսքորըրը: Հայաստանի ախոյեանութենէն բացի ելոյթ ունեցած եմ նաեւ Ռուսիոյ ախոյեանութեան մրցումներուն, երբ այդ ժամանակ Հայաստան մաս կը կազմէր նախկին Խորհրդային Միութեան:

Հ.- Իբրեւ մարզիկ մաս կազմած ես նաեւ Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին: Արդեօք ի՞նչ ըսելիք ունիս այդ ուղղութեամբ:

Պ.- 1995էն 2001 մաս կազմած եմ Լիբանանի ֆութպոլի ազգային խումբին եւ կարեւոր ներդրում ունեցած եմ հոն, նշանակելով յիշատակելի եւ անմոռանալի կոլեր: Հազիւ տարի մը անց՝ 1996ին, ընտրուեցայ Յունուար ամսուան Ասիոյ լաւագոյն ֆութպոլիստը:

Հ.- Արդեօք երբեք փափաքած ես Լիբանանի կոլսքորըրը դառնալ:

Պ.- Տասը տարի է ի վեր կը մասնակցիմ Լիբանանի ախոյեանութեան մրցումներուն եւ երբեք ալ մտքէս չէ անցած կոլսքորըր դառնալ: Երեք անգամ այդ առիթը ներկայացաւ ինծի, սակայն վերջին հանգրուանի մրցումներուն քիչ մը «անակնկալ» արդիւնքները պատճառ դարձան, որ կոլսքորըրը այլ խումբէ մը ըլլայ...

Ինծի համար կոլսքորըր դառնալը երբեք ալ կարեւոր չէ: Էականը խումբին յաջողութիւնն է: Խմբային խաղարկութիւն մը կիրարկելով, վստահաբար շատ աւելի մեծ յաջողութիւններու կրնանք հասնիլ, քան՝ կոլսքորըր դառնալով: Եթէ փափաքէի կոլսքորըր դառնալ, խումբին փենակիները հարուածողը ես կ'ըլլայի: Այդ մէկը ընելու փոխարէն, կը նախընտրեմ խմբակիցներուս լաւ փոխանցումներ կատարել, որովհետեւ ի վերջոյ խումբին շահերը գերադաս են անհատական շահերէն:

ՀԱՐՑՈՒՄ.- Հ.Մ.Ը.Մ.Ի շապիկը կրած ես 1991էն սկսեալ, եւ անոր հետ Լիբանանի ախոյեանութեան մրցումներուն մասնակցած, ապա Սաթեւի միացած: Արդեօք ի՞նչ բանը մղեց, որ վերադառնաս Հ.Մ.Ը.Մ.Ի, երեք տարի ետք:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Վստահաբար ոեւէ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ չ'ուզեր կամ չի փափաքիր իր ակումբը լքելով միանալ օտար կազմի մը: Նոյն բանը պատահեցաւ ինծի հետ, սակայն զուտ տնտեսական պայմաններու բերումով արդ մէկը դժբախտաբար տեղի ունեցաւ:

Անցեալին մասին վստահաբար խօսիլը աւելորդ է: Սակայն, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն կը վստահեցնեմ, որ ֆութպոլիստի ասպարէզս պիտի աւարտի Հ.Մ.Ը.Մ.ի խումբին հետ: Այնքան ատեն որ ի վիճակի եմ դաշտ ներկայանալու՝ պիտի չվարանիմ:

Հ.- Ի՞նչ ձեւով կը դիտես մարզիկ-մարզիչ պատասխանատու փոխյարաբերութիւնները:

Պ.- Անձամբ ոչ մէկ ատեն որեւէ հարց չեմ ունեցած ոեւէ մէկուն հետ: Այս տարի, սակայն, զգալի փոփոխութիւն կայ խումբէն ներս: Կը տեսնեմ, որ խումբին բոլոր մարզիկներուն ալ փոխյարաբերութիւնները իրարու հետ կը գտնուին իրենց գազաթնակէտին վրայ եւ անոնք իրենց ամէն կարելին կ'ընեն իրենց առաւելագոյնը տալու:

Խումբին արձանագրած արդիւնքները տեսնելով, արդէն ըսելիք չի մնար: Ութ մրցումէ առաւելագոյն 24 կէտերը ապահոված խումբէ մը աւելի ի՞նչ կարելի է ակնկալել: Պատասխանը կը մնայ մէկ բան. անիկա ամէն գնով վճռած է ամէնէն արագ ժամանակամիջոցին վերստին բարձրանալ Ա. դասակարգ, ուր կը գտնուի անոր իսկական տեղը:

Մէկ բան եւս կու գամ աւելցնելու, որ մենք մեր արձանագրած յաղթանակները կը պար-



Հ.- Վերջին խօսքը ձեզի է:

Պ.- Առաջին հերթին, խորին շնորհակալութիւն կը յայտնեմ «Նաւասարդ»ին, որ ինծի առիթը տուաւ այս հարցազրոյցը կատարելու: Անոր կը մաղթեմ յաջողութիւն:

Ինչ կը վերաբերի Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն, անոնց կը մաղթեմ համբերութիւն, որովհետեւ տակաւին ախոյեանութիւնը աւարտած չէ եւ ճամբուն կէսը չենք կտրած տակաւին, հետեւաբար տօնախմբութեան ժամանակը չէ հասած, թէեւ անոր ոտնաձայնը կը լսենք...

2002 - 2003 եղանակին աւարտին վստահաբար միասնաբար պիտի տօնենք մեր խումբին վերստին Ա. դասակարգ բարձրանալը:

ԼՈՒՐԵՐ՝ ԸԱՅՐԵՆԻ ՍԱՐՁԱՃՆԱՐԸՆ

ՅՈՒՆՈՒՄԸ ՄԱՐՉԱԿԱՆ ՀԱՐՈՒՍՏ ԱՄԻՍ

Յունուարը հայրենի մարզիկներուն համար հարուստ պիտի ըլլայ տարբեր մրցաշարքներով եւ ճակատամարտերով: Հայաստանի ֆուտբոլի ախոյեան եւ բաժակակիր Երեւանի «Փիւնիկ»ը պիտի ուղղուի Մոսկուա՝ մասնակցելու համար ԱՊՀի անդամ եւ Պայթեան երկիրներու ախոյեան ակումբներու բաժակի մրցումներուն: Փիւնիկ, ըստ մեկնաբաններու, հնարաւորութիւն ունի զտուժի հանգրուանը աւարտելու առաջին դիրքին վրայ: Փիւնիկի խմբակին մաս կը կազմեն Տաճիկիստանի «Ռեգար - Տատաղ»ը, Պիեռոուսիոյ «ԲԱՏէ»ն եւ Ռիկայի «Ակոնտո»ն:

Ազատ ոճի հայրենի ըմբիշներ պիտի մասնակցին Կրասնոյարսկի մէջ տեղի ունենալիք միջազգային մրցաշարքին, մինչ գեղասահքի (Ֆիկլըր Սքէյթինկ) ախոյեանները պիտի ուղղուին Շուէտ՝ Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն ելոյթ ունենալու, իսկ դահուկի ախոյեանները պիտի մասնակցին Զուիցերիոյ մէջ տեղի ունենալիք աշխարհի ախոյեանութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԻ ՄԱՄՆԱԿՅԻ ՓԱՐԱ - ՕԼԻՄՓԻԲ ԽԱՂԵՐՈՒՆ

2004ի Սեպտեմբեր 17 - 28ին Աթէնք պիտի հիւրընկալէ հաշմանդամ մարզիկներու ողիմպիականը (Փարա - Օլիմպիքս): Հայաստան եւս, ինչպէս 1996ին եւ 2000ին, իր մասնակցութիւնը պիտի բերէ այս խաղերուն:

ՄԱՐԳԻՍ ՄԱՐԳԱՆԵԱՆԻ ՅԱՉՈՂ ՄԵԿՆԱՐԿԸ



Հայրենի ամէնէն բարձր դասուած թենիսմէն Մարգիս Մարգսեան 2003 տարեշրջանը սկսաւ յաջող կերպով երբ Հնդկաստանի մէջ տեղի ունեցող միջազգային բաց մրցաշարքին հասաւ մինչեւ քառորդ աւարտական հանգրուան:

Յրանսացի Ժիւլիէն Վարլէթը 6 - 1, 7 - 5 արդիւնքով եւ սպանացի Ալպէրթ Մոնթանէսը 6 - 4, 6 - 3 արդիւնքով տապալելէ ետք, Մարգսեան տեղի տուաւ 23ամեայ թայլէնտցի Փարատորն Սրիչափանի դիմաց՝ 6 - 4, 6 - 4 արդիւնքով:

Նշենք, որ Մարգսեան 2002ը աւարտեց միջազգային դասաւորման 100րդ դիրքին վրայ. ան ծունկէն վիրաւորուելով՝ դաշտերէն հեռու մնաց ամբողջ երկու ամիս:



ՄԻՔԱՅԷԼԵԱՆ՝ ՄԻՇՏ ՎԵՐԵԼՔԻ ՄԷՉ

Աւստրալիոյ մէջ տեղի ունեցող թենիսի աղջկանց միջազգային մրցաշարքին՝ «Անքըլ Թոպիզ Հարտքորթս», Մարի - Գայիանէ Միքայէլեան հսկայական յաջողութեամբ սկսաւ տարեշրջանը:

Աշխարհի թիւ 44 դասուած զուիցերիահայ Միքայէլեան քառորդ աւարտականին 6 - 4, 6 - 2 արդիւնքով ջախջախեց աշխարհի թիւ 15, եւ միեւնոյն մրցաշարքի 1999ի տիտղոսակիր զուիցերիացի Փէթի Շնայտրըրը, ապահովելով աւարտական հանգրուանի իր տոմսը:

Եթէ 18ամեայ Միքայէլեան աւարտականին տապալէ ֆրանսացի Նաթալի Տէչին, տիրացած պիտի ըլլայ իր ասպարէզի երկրորդ արհեստավարժ տիտղոսին:

Մարի - Գայիանէ Միքայէլեան ծնած է 3 Մարտ 1984ին, Լոզան (Զուիցերիա): Եւրոպայի կրտսերներու ախոյեան հանդիսանալէ ետք ան արդէն կը նկատուի խոստմնալից «թենիսովումըն» մը: 1999ին աշխարհի թիւ 255 դասուած Միքայէլեան 2000ը կ'աւարտէ 339րդ դիրքին վրայ, իսկ 2001ին հսկայական ուստում մը կատարելով՝ տարին կ'աւարտէ 78րդ դիրքին վրայ: 2002ին Միքայէլեան կը շարունակէ իր յառաջխաղացքը եւ կը հասնի դասաւորման 44րդ դիրքին:

1999ի Մարտ 3ին արհեստավարժ դարձած Միքայէլեան արհեստավարժ ասպարէզի իր առաջին տիտղոսը կը շահի 2002ի Յունիսին՝ Թաշկէնտի միջազգային մրցաշարքին:



Միքայէլեան հպարտ է իր հայութեամբ եւ Հայաստանի դրօշին տակ ներկայանալու կարելիութիւնը միշտ նկատի ունի:

Նշենք, որ ան 1999ին մասնակցեցաւ նաեւ համահայկական Ա. խաղերու թենիսի մրցաշարքին եւ հանդիսացաւ ախոյեան:

# ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԷՏԸ՝ 2006



Հարաւային Քորէայի եւ Ճափոնի մէջ տեղի ունեցած 2002ի մոնտիալը բաւական հարուստ էր անակնկալներով: Արդարեւ, Սենեկալի երիտասարդ կազմը պարտութեան մատնեց ախոյեան Ֆրանսան, Հար. Քորէա անակնկալօրէն գերազանցեց Իտալիոյ եւ Սպանիոյ նման

հսկաներ, իսկ Շուէտ եւ Անգլիա ձեռք-ձեռքի տուած, մրցակցութենէն հեռացուցին տիտղոսին գլխաւոր թեկնածու՝ Արթանթինի կազմը: Այս բոլոր անակնկալները շատերու հաճելի թուեցան, մանաւանդ Արթանթինը, Սպանիան, Իտալիան եւ Ֆրանսան չսիրող համակիրներուն, սակայն շատ մը «չէզոք» հանդիսատեսներ, որոնք մոնտիալին կը հետեւէին պարզապէս գեղեցիկ ֆուտպոլ համտեսելու նպատակով, սոյն մրցաշարը որակեցին անհամ եւ սնոտի:

Այս մրցաշարին լոյսին տակ, Իւրոսփորթ.քոմ կայքը 2003ի նախօրեակին իր էջերուն մէջ տեղ տուաւ Ռոպրթ Թոմսընի պատրաստած մէկ վերլուծական յօդուածին, որուն մէջ Թոմսըն 2002ի մոնտիալը կը բաղդատէ նախորդ քանի մը մոնտիալներուն հետ եւ զայն կը համարէ անմակարդակ, որովհետեւ հակառակ անակնկալներով հարուստ ըլլալուն՝ անիկա չկրցաւ ֆուտպոլի սիրահարներուն հրամցնել այդ գեղեցիկ եւ յարձակողական ֆուտպոլը, որ միշտ կ'ակնկալուի:

Այսպէս, երբ անգամ մը յիշենք 1990ին Իտալիոյ մէջ տեղի ունեցած մոնտիալը, արդէն իսկ կը զգանք տարբերութիւնը: Այո՛, 90ի մոնտիալը երկար ժամանակ որակուեցաւ պաղ եւ կոլերով աղքատ մրցաշարք մը, սակայն երբ վայրկեան մը մոռնանք բոլոր այդ «վատաբանութիւնները» եւ փորձենք բաղդատել 21րդ դարու առաջին մոնտիալին հետ, կը նկատենք, որ 90ի մրցաշար-



քը «ընտիր խառնուրդ» մը լայն բոլոր ազդակներ, որոնք ֆուտպոլը կը դարձնեն շքեղ եւ տպաւորիչ:

Արդ՝ 90ի մոնտիալը այսպէս սած կոյթներու բախումն էր կարծես լայն մարզական եւ ըլլալով ընկերային գետնի վրայ: Փաստօրէն, այս մրցաշարքին ընթացքին, տարբեր երկիրներէ եկած եւ տարբեր մշակոյթներու պատկանող համակիրներ համախմբուեցան Իտալիոյ մարզադաշտերուն մէջ, հանդիսատես ըլլալու համար իրենց սիրած եւ պաշտած «կուլտւրներուն» կատարելիք «հրաշք»ներուն եւ «կախարդութիւն»ներուն: Ի վերջոյ, այս մոնտիալին էր, որ «ծերացած» Մարատոնա գրեթէ առանձինն յառաջ մղեց միջակ մակարդակի իր խումբը եւ հասցուց մինչեւ աւարտական, ուր միայն տեղի տուաւ ժամանակակից հսկային՝ Արեւմտեան Գերմանիոյ առջեւ: Այս մրցաշարքին էր նաեւ, որ հզօր կարծուած Հոլանտա քայքայուեցաւ ներքին անհասկացողութեան եւ անհամաձայնութեան պատճառով: Հոս էր, որ աշխարհը հանդիսատես եղաւ Փոլ Կէսքոյնի սքանչելի խաղարկութեան եւ կիսաւարտական մրցումին անոր թափած յուզիչ արցունքներուն, Ռոսթ Միլլայի առաջնորդած անպարտելի խումբին ելոյթներուն, Թոթօ Սթիլաչի նշանակած 6 կոլերուն եւ վերջապէս Ռոնէ Հիկիթայի չնաշխարհիկ մագերուն...:

Իրապէս, որ երազային եւ սքանչելի էր այդ մոնտիալը:

Գալով 1994ին Միացեալ Նահանգներու մէջ տեղի ունեցած մոնտիալին, կը նկատենք, որ անիկա ձեւով մը պաշտօնական փորձ մըն էր Հար. Քորէայի եւ Ճափոնի մոնտիալին: Այս մրցաշարքն ալ չկրցաւ հրամցնել այդ գեղեցիկ եւ իսկական ֆուտպոլը: Անիկա սկիզբէն իսկ յատկանշուեցաւ անկազմակերպ հակաշարձակողականով, որ եկաւ փոխարինելու նախապէս որդեգրուած զուտ յարձակողական եւ լաւապէս կազմակերպուած թաքթիքները:

Այո՛, այս մրցաշարքին ընթացքին այդքան ալ մեծ եւ հետաքրքրական անակնկալներ տեղի չունեցան (բացի՝ Գերմանիոյ պարտութենէն) եւ աւարտականն ալ եղաւ սպասուածին պէս՝ Պրագիլի եւ Իտալիոյ միջեւ, որոնք փաստօրէն մրցաշարքին ամէնէն ձեռներէց եւ գրեթէ լաւագոյն կազմերն էին. սակայն, վերջին հանգրուանին ֆուտպոլի սիրահարները դէմ յանդիման եկան անհամ, անմակարդակ եւ ծայր աստիճան ձանձրացուցիչ աւարտական մրցումի մը: Մոնտիալի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, աւարտական մրցումին կոլ չնշանակուեցաւ կամ աւելի ճիշդը՝ կոլ նշանակելու յիշատակելի առիթներ անգամ չստեղծուեցան. մրցաշարքին ճակատագիրը բաւական քաջքուցելէ ետք, փենայթիներու վայրկենական դատողութեան ձգուեցաւ. եւ վերջապէս, մրցաշարքին լաւագոյն խաղացողներէն մէկը նկատուող՝ Ռոպերթօ Պաճիօ (Իտալիա) աներեւակայելի հարուածով մը վերջ դրաւ իր կազմին բոլոր յոյսերուն: Այսպէս, 94ի աւարտական մրցումը դարձաւ սեւ յիշատակ մը, որ դրոշմուեցաւ մեր յիշողութեան



մէջ, երբեք չկրկնուելու յոյսով...

Փաստօրէն, այս մրցաշարքին միակ «լաւ» կազմը Պրագիլն էր, որ կարծես մասամբ մը վերագտած էր 1970ի իր փառքի օրերը: Պրագիլն էր, որ մեզի հրամցուց յարձակողական ֆուտպոլը: Արդարեւ, մարզիչ Քարլոս Փարէյրա մէկդի դնելով ամբողջ 90 վայրկեան յարձակողական ֆուտպոլ կիրարկելու բոլոր վտանգները, ստեղծեց զօրաւոր եւ տիկամիք կազմ մը, որ խմբապետ Քարլոս Տունկայի առաջնորդութեամբ՝ արշաւեց եւ տիրացաւ բաժակին՝ խանդավառելով աշխարհի տարածքին բոլոր համակիրները: Արդեօ՞ք Մաքիավելլի Քարլոս Փարէյրային կ'ակնարկէր երբ ըսաւ. «Նպատակը կ'արդարացնէ միջոցը»...:

Ինչ կը վերաբերի 1998ի մոնտիալին, անոր վարկը փրկուեցաւ Ֆրանսական զօրաւոր կազմով, որ իր իսկ հողին վրայ բարձրացուց բաժակը եւ երիտասարդ Խրուաթիոյ կազմով, որուն մարզիկները ազգային ոգիով լեցուած եւ ծայր աստիճան խանդավառութեամբ արշաւեցին եւ գրաւեցին պատուաբեր Յրդ դիրքը:

Բայց այս վերջին մոնտիալը իրապէս, որ լուրջ մեկնաբանութեան կարիքը ունի, որովհետեւ անոր ոչ մէկ երեսը կը համաձայնի իսկական ֆուտպոլի հասկացողութեան հետ:

Արդարեւ, մրցաշարքին առաջին հանգրուանէն իսկ Ֆրանսայի, Արթանթինի եւ Փորթուգալի նման հսկաներ դուրս մնացին, որովհետեւ չկրցան որեւէ ձեւով կոտորել իրենց մրցակիցներուն սեղմ պաշտպանողականը: Թերեւս մեզմէ ո՛չ ոք կ'առարկէ, թէ Ֆրանսացիք տարբեր ճակատագրի մը արժանի էին. թերեւս սխալ պիտի ըլլար եթէ ըսէինք, թէ Հար. Քորէայի փոխարէն Իտալիա ինք պէտք է ըլլար Սպանիոյ մրցակիցը եւ կամ Միացեալ Նահանգներու փոխարէն Փորթուգալ ինք պէտք է ըլլար Բ. հանգրուան անցնողը... Բայց այս բոլոր անակնկալները, որոնք օրին մեզ խանդավառեցին, յիշատակի արժանի ի՞նչ հրամցուցին ֆուտպոլի սիրահարին:

Փաստօրէն, յատուկ յիշատակելի ոչինչ կար Միացեալ Նահանգներու կազմին մէջ, որ կրնար բացի Ամերիկայի համակիրներէն ուրիշ որեւէ ֆուտպոլի սիրահար մը համոզել, թէ Բ. հանգրուանը շատ աւելի լաւ մակարդակի պիտի ըլլայ Քրուտտիօ Ռէյնայով կամ Քլինթ Մաթիսով մը քան թէ՛ Փապլօ Այմարով, Փաուլ Թիթայով կամ Ֆիկոյով մը:

Իսկ գալով Արթանթինի այդքան կանուխ մեկնելուն՝ մեկնաբանութիւն չկայ: Միայն հարցում մը. արդեօ՞ք այդ մէկը հսկային տրուած

# 2002Ի ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ

Համեստութեան լաւ դաս մըն էր թէ՛ անկազմակերպ եւ տկար կազմի մը տրուած աղուո՛ր ապտակ մը... եւ արդեօք այս հարուածին ազդեցութեան տակ առիթը պիտի ունենա՞նք 2006ին հանդիսատես ըլլալու արժանթիւնեան գեղեցիկ ֆութպոլի մը, որ պիտի գայ Մարատոնայի եւ անոր երկրին պատիւը պաշտպանելու...

Յամենայնդէպս, բոլոր դիտանկիւններէն դիտուած՝ կարելի է ըսել, որ 2002ի մոնտիալը պէտք եղած մակարդակին չէր: Անիկա այդ սքանչելի մրցաշարքը չէր, որուն 4 տարին անգամ մը անհամբեր կը սպասենք: Պրագիլի միլիոնաւոր համակիրները կրնան զայն բացառիկ սեպել, ակնարկելով Պրագիլ-Գերմանիա պատմական աւարտականին (եւ ի մտի ունենալով իրենց խումբին յաղթանակը)՝ սակայն, եթէ անոնք ալ անգամ մը չէզոք դիրք բռնած դիտեն հարցը, շատ յստակ պիտի տեսնեն մրցաշարքին խոցելի կէտերը: Անշո՛ւշտ, որ անակնկալներն ու հսկաներուն պարտութիւնը բնական են որեւէ մրցաշարքի ընթացքին եւ տեղին համեմատ ալ հետաքրքրական են, սակայն երբ այս անակնկալները տրամաբանութեան սահմաններէն դուրս կու գան, անախորժ վիճակ մը կը ստեղծուի եւ վստահաբար, որ Պրագիլի համակիրներն իսկ համաձայն են այս կէտին շուրջ:

Լաւագոյն փաստը՝ 2002ի մոնտիալը: Ուրեմն լաւ կ'ըլլայ, որ միլիոններ գանձող այս ֆութպոլիստներն ու մարզիչները մոռնան այլեւս այս անպէտք, անհամ, կեղծ եւ առեւտուրի վերածուած ֆութպոլը եւ փորձեն վերադառնալ իսկական եւ կազմակերպուած ֆութպոլին եւ ինչո՞ւ չէ՛ խորամանկ եւ ճարպիկ ֆութպոլին:

Ֆութպոլի սիրահարներուն ծարաւը յագեցընելու համար, պէտք չունինք բերդապահներու անտեղի սխալներուն իբր արդիւնք նշանակուող մեծ թիւով կոլերու: պէտք չունինք նաեւ ամբողջ մրցաշարքի մը ընթացքին ձեռնածալ մնացած եւ միայն վերջին մրցումին, մրցակից յետսապահներուն անիմաստ մէկ սխալէն օգտուելով առաջին քանի մը երկվայրկեաններուն իսկ յաղթանակի կոլը նշանակած «տաղանդաւոր» յառաջապահներու... հապա՛ պէտք ունինք խորամանկ եւ խելացի փլէյմէյքըրներու, որոնք կրնան խաղին տալ իր անուշուրթիւնն ու գեղեցկութիւնը: պէտք ունինք կազմակերպուած խումբերու, որոնց խաղացողները իրենց իբր նպատակ կ'ունենան ո՛չ թէ ոսկեգնդակին տիրանալը, այլ՝ իրենց խումբին եւ իբր արդիւնք նաեւ ֆութպոլին վարկը բարձր պահելը:



Ի վերջոյ, պէտք է յիշել, որ փողոցը խաղցող ֆութպոլին մէջ իսկ, պարտութիւնը այդքան վատ եւ նուաստացուցիչ չէ որքան՝ ձանձրացուցիչ խաղալը:

Ի վերջոյ, պէտք է յիշել, որ փողոցը խաղցող ֆութպոլին մէջ իսկ, պարտութիւնը այդքան վատ եւ նուաստացուցիչ չէ որքան՝ ձանձրացուցիչ խաղալը:

Ֆութպոլի սիրահարները պէտք ունին այնպիսի կազմերու, որոնք կրնան մեզի յիշեցնել, թէ էրիք Քանթոնայի ծանուցումներ պատրաստելէն շատ աւելի առաջ, ֆութպոլը, բառին բուն իմաստով՝ արուեստ մըն էր:

Կրնանք սպասել մինչեւ 2006ի մոնտիալը, սակայն ո՛չ աւելի...

ՆԱՐԻՆԷ

## ԱԼԵՔՍԱՆՏՐ ՔՈՎԱԼԵՆՔՕ՝ ՄԱՀԱՅԱԾ

1 Ապրիլի առաւօտեան գլխուղեղի կաթուածով մահացաւ Հայաստանի «Արարատ» ֆութպոլի խումբի «ոսկէ կազմ»ի կեդրոնական պաշտպան Ալեքսանտր Քովալենքօ:

Ծագումով ուքրաինացի Քովալենքօ մօտաւորապէս 16 տարի մաս կազմած է Հայաստանի «Արարատ»ին, որ 1973ին դարձաւ նախկին Խորհրդային Միութեան ախոյեան եւ բաժակակիր:

1993-1994 Քովալենքօ եղած է Հայաստանի ազգային հաւաքականին ղեկավարը, իսկ 2002ի առաջին օրերէն սկսեալ ստանձնած էր Երեւանի «Սպարտակ -2» խումբին ղեկավարութիւնը:

## ՖՈՒԹՊՈՒԼ

### ՏԻՏԱ ՈՉ ԵՒՍ Է

Երեքշաբթի 17 Սեպտեմբերին, պրագիլցի միջազգային նախկին յառաջապահ Տիտա, որ մաս կազմած էր 1958ին առաջին անգամ ըլլալով աշխարհի ախոյեան հանդիսացած Պրագիլի ազգային խումբին, մահացաւ 68 տարեկանին: Տիտա, բուն անունով՝ էտվալտօ Ալվէս Տը Սանթա Ռոզա, շաբաթէ մը ի վեր կը գտնուէր Ռիօ Տը Ժանէյրօյի մէկ հիւանդանոցը: Հիւանդանոցին պատասխանատուները յայտնեցին, թէ Տիտա քաղցկեղէ կը տառապէր:

Տիտա, որ եղած է 1950ականներու Ֆլամենկոյի համակիրներուն հերոսը, իր խումբին հետ նշանակած է աւելի քան 500 կոլեր: Ան 1954ին եւ 1955ին տիրացած է Քարիոքայի մրցաշարքին, որ ժամանակին ամէնէն հռչակաւոր մրցաշարքն էր Պրագիլի մէջ: Ան նաեւ երեք անգամ հանդիսացած է այս մրցաշարքին կոլսքորըրը:

Տիտա, որ 1958ի Մոնտիալի մասնակցած էր 6 մրցումներու եւ Պրագիլի հետ նշանակած էր չորս կոլեր, իր ասպարէզը լքելէն ետք ալ 20 տարի մնացած էր Ֆլամենկոյի հետ, ուր ստանձնած էր ակումբին պատանիներու մարզիչի պաշտօնը եւ ճամբայ հարթած էր շատ մը տաղանդներու յայտնաբերման: Վերջին շրջանին, սակայն, ան հեռու մնացած էր ֆութպոլի աշխարհէն եւ մերժած էր որեւէ

## Հարցազրոյց ունենալ: ՎԱԼԵՐԻ ԼՈՊԱՆՈՎՍԻԻ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ ՀՈՂԻՆ

Հազարաւոր ուքրաինացիներ, որոնց կարգին երկրին նախագահը՝ Լէոնիտ Քուչմա, Հինգշաբթի, 16 Մայիսին իրենց վերջին հրաժեշտը տուին ուքրաինացի մարզիչ Վալերի Լոպանովսքիի, որուն մարմինը յանձնուեցաւ հողին: Ան մահացաւ ուղեղի վիրաբուժութեան ենթարկուելէ երկու օր ետք: Լոպանովսքի, որ 63 տարեկան էր, իր սերունդի ամէնէն յաջող մարզիչներէն մէկն էր:

Լոպանովսքի, որուն առողջական վիճակը այդքան ալ լաւ չէր, փոխադրուած էր Զափորիօի մէկ հիւանդանոցը Տիտամօ Քիել-Մեթալուրկ Զափորիօ մրցումին ընթացքին շատ գէշ վիճակի մէջ ըլլալէ ետք: Հակառակ անոր, որ վիրաբուժութենէն ետք բժիշկներ յայտնած էին ըսելով, որ անոր վիճակը բարելաւումի ընթացքի մէջ է, սակայն այդ մէկը տեւած էր շատ կարճ:

Քիելի մէջ ծնած Լոպանովսքի, նախկին Խորհրդային Միութեան ախոյեանութեան մրցումներուն ընթացքին դաշտ ներկայացած է 253 անգամ, նշանակելով 71 կոլ: Ան երկու անգամ կրած է նախկին Խորհրդային Միութեան ֆութպոլի ազգային խումբին շաբաթէ մը կը:

Ուքրաինական շատ լավ ակումբներու մարզիչ լինելուց բացի, ան եղած է նախկին Խորհրդային Միութեան, Արաբական Միացեալ Երկրներու, Քուէյթի եւ Ուքրաինոյ ֆութպոլի ազգային խումբերուն մարզիչը ալ:

## ԻՏԱԼԻԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

### ՄԻՆԹԻՆԱ ՈՉ ԵՒՍ Է

Իտալիոյ ֆութպոլի պատմութեան մէջ 76 տարուան կեանք ունեցող եւ երկու անգամ ախոյեան հանդիսացած Ֆիորենթինայի անունը Ուրբաթ, 2 Օգոստոսին իտալական ֆութպոլէն, սնանկացած հռչակուեցաւ:

Դեռ երեք եղանակ առաջ, «Չեմփիլընզ Լիկ»ի իր մասնակցութիւնը բերած Ֆիորենթինա, որ 2001-2002 եղանակին աւարտին փոխադրուած էր Բ. դասակարգ, այդ դասակարգի ախոյեանութեան մէջ ալ չըն-

դունուեցաւ, որովհետեւ գրեթէ կը գտնուէր սնանկացումի սեմին:

Իտալիոյ ախոյեանութեան ոչ մէկ դասակարգին մէջ տեղ մը ունեցող Ֆիորենթինայի բոլոր մարզիկներն այժմ «ծախու» յայտարարուեցան եւ ակումբին վարչութիւնը փորձեց համաձայնութեան գալով բոլորին հետ ջնջել պայմանագրութիւնները:

Ֆլորանսի քաղաքապետական խորհուրդը յայտնեց, թէ հիմնած է նոր ակումբ մը, որ կը կոչուի «Ֆիորենթինա 1926 Ֆլորենթինա», ակումբին նախագահ նշանակելով Ֆլորանսի քաղաքապետը՝ Լէոնարտօ Տոմենիքին:

Սակայն հակառակ այդ մէկին, իտալական ֆութպոլի պատասխանատուներ պէտք է անոր տան նոր արտօնագիր մը, որպէսզի անիկա մաս կազմէ Գ. դասակարգին (Մի. 1) եւ կամ Դ. դասակարգին (Մի. 2):

Իտալական մամուլին համաձայն, 2001-2002 եղանակին աւարտին Ա. դասակարգ բարձրացած Քոմօ ակումբին այժմու նախագահը՝ էնրիքօ Փրեզիոսի շատ հաւանաբար ըլլայ Ֆլորանսի ակումբին գորավիզ կանգնող գլխաւոր անձը:

Ֆլորանս քաղաքի խորհուրդին գլխաւոր պատասխանատուներէն՝ էօթենիօ Ճիանի կը յայտնէ, թէ վերստին խումբին անցեալի փառքի օրերը ունենալու համար, նոր Ֆիորենթինա պէտք ունի ամբողջ քաղաքին համակիրներուն գորակցութեան, որովհետեւ խումբը կը պատկանի անոնց եւ պէտք է որ անոնք գործակցին իրենց հետ:

Իտալիոյ ֆութպոլի ֆետերասիոնին հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, Ֆլորենթինայի պարտքը հասած էր 22 միլիոն եւրոյի: Վստահաբար, որ այդքան պարտքու տակ եղող խումբ մը չէր կրնար մաս կազմել նոյնիսկ Բ. դասակարգին, հետեւաբար անիկա հռչակուեցաւ սնանկացած:

Ըստ իտալիոյ Լիկայի ֆետերասիոնին նախագահ Ատրիանօ Կալիօ Ք. դասակարգին մէջ Ֆիորենթինան փոխարինող խումբը կ'ըլլայ Թեռնանա, հակառակ անոր որ անիկա անցեալ եղանակին 17րդ դիրքը գրաւելով փոխադրուած էր Գ. դասակարգ:

# Հ.Մ.Բ.Մ. - Հ.Մ.Մ. ՄԻՑՈՒՄԷ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ



Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութան 9րդ հանգրուանին, Հ.Մ.Բ.Մ.ի ներկայացուցչական կազմը արձանագրեց յաջորդաբար իր 9րդ յաղթանակը՝ 3 - 0 արդիւնքով պարտույթում մատնելով Հ.Մ.Մ.ը:

Գագաթի այս ձախառումին ներկայ էին աւելի քան 6 հազար Հ.Մ.Բ.Մ.ական համակիրներ, որոնք իրենց սիրելի կազմին իրաջանչիւր մրցումը կը վերածեն տոնախմբու մը:

## ՄԻՉՁԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ ՍԵՐԺ ՅՈՎՆԱՆԵԱՆ՝ ՄԻՉԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՈՒԱԾ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Ճատրակի միջազգային ֆետերասիոնի հրապարակած Յունուար 1ի դասաւորման ցանկին մէջ ընդգրկուած են նաեւ Լիբանանի աղջկանց ախոյեան Սիւզան Մուրատեան եւ Սերժ Յովնանեան:

Այսպիսով, Քնարիկ Մուրատեանէն ետք, անոնք կը դառնան Հ.Մ.Բ.Մ. Անթիլիասի երկու նոր վարպետներ, որոնք կ'արժանանան այդ պատիւին:

Յունուար մէկի տուեալներով Քնարիկ Մուրատեան ապահոված է 2107 կէտ, Սիւզան Մուրատեան՝ 2007, իսկ Սերժ Յովնանեան՝ 2004:

Նշենք, որ այս դասաւորումով, Քնարիկ Մուրատեան Միջին Արեւելքի ամենէն բարձր դասուած նատրակի վարպետուհին կը հանդիսանայ:

## ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ

### ԵՈՒՐԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԻ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԻՆ

Մանչեսթրի մէջ (Անգլիա) տեղի ունեցող Բրիտանական Հասարակապետութեան ծանրաբարձութեան մրցումներուն, աւստրալիահայ Եուրիկ Սարգսեան 62 քկ. եւ վեր դասակարգին մէջ հանդիսացաւ առաջին, երբ Չորեքշաբթի, 31 Յուլիսին բարձրացնելով 277,5 քկ., տիրացաւ ոսկի մետալին: Քրիշնան Մատասամի (Հնդկաստան) շահեցաւ արծաթ մետալը (267,5 քկ.), իսկ Մարթուս Սթեֆըն (Նաուրու)՝ պրոնզ մետալը (265 քկ.):

Աւստրալիացի Իան Թորփ, 400 մեթր ազատ լողի մրցումներուն յաջողեցաւ բարելաւել իր իսկ հաստատած աշխարհի մրցանիչը, արձանագրելով՝ 3 վայրկեան 40" 08 արդիւնք մը: Ան անցեալ տարի Յուլիսին Ֆուլթոն-քայի մէջ (Ճափոն) հաստատած էր աշխարհի մրցանիչ, արձանագրելով՝ 3' 40" 17 արդիւնք մը:

[www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com)